

ՄԱՍԻՍ

Ե Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ԻՋ. ՏԱՐԻ ԹԻԻ 17 (1267) ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 20, 2006
VOLUME 26, NO. 17 (1267) SATURDAY, MAY 20, 2006



Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցության
Արևմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ԿՐ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՏԻՐԵԼ ՎԱԽԻ ՄԹՆՈՒՈՐՏ

Մի քանի շաբաթներ առաջ, երբ հրապարակուեցաւ ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Արթուր Բաղդասարեանի գերմանական թերթի մը տուած մէկ հարցազրոյցը, ուր ան յանդգնութիւնը ունեցած էր արտայայտուելու 2003-ի նախագահական ընտրութիւններու կեղծուած ըլլալու եւ Հայաստանի ՆԱԹՕ-ի անդամակցութեան մասին, քաղաքական մեկնարկները կանխատեսեցին «Օրինաց Երկիր» կուսակցութեան ղեկավարի մօտալուտ «ամուսնալուծումը» իշխանական վերնախաւէն: Սակայն, ոչ ոք կը կոտորէր, որ հարուածը կրնար ըլլալ այսօրու ուժգին ու անմիջական: Բաղդասարեան թեւ փորձ կատարեց մեղմելու իր յայտարարութիւններու ձգտած ազդեցութիւնը, սակայն ուշ էր արդէն ու իր նկատագիրը վնասուած: Երկրի վրէժխնդիր ղեկավարը չէր կրնար ներել իր անձին ու հեղինակութեան դէմ կատարուած այս ոտնձգութիւնը:

Ու այսպէս, ազդանշանը ստանալէ ետք, համրուած օրերու ընթացքին «Օրինաց Երկիր»-ի գործարար պատգամաւորները, մէկը միւսին ետեւէն սկսան դուրս գալ կուսակցութեան շարքերէն եւ երբ երկրորդ մեծագոյն խմբակցութիւնը ունեցող իր կուսակցութիւնը դարձաւ փոքրամասնութիւն, Ազգային Ժողովի նախագահի առջին ուրիշ ելք չկար, բացի իր պաշտօնէն հրաժարիլը:

«Օրինաց Երկիր» վիճակուած այս նկատագիրը գոյուցում մըն էր նաեւ իշխանութեան մաս կազմող ու քաղաքական օրինակակցութիւնները արդարացնող միւս երկու կուսակցութիւններուն՝ Հանրապետականներուն եւ Դաշնակցութեան, որոնք եւս ենթակայ են պարակտման, երկրի միապետին նկատմամբ ցոյց տրուած առաջին անհնազանդութեան պարագային իսկ:

«Օրինաց Երկիր» դուրս եկած աւելի քան տասը պատգամաւորներէն եւ ոչ մէկը քաղաքներու ունեցաւ խօսելու իր հրաժարականի դրդապատճառներու մասին: Դեպքերու այս զարգացումը անգամ մը եւս եկաւ ցոյց տալու թէ, ինչպիսի տխուր վիճակ կը պարզէ այսօրուայ Հայաստանը, ուր ամէնուրեք կը տիրէ վախի մթնոլորտ: Վախի մէջ է հասարակ քաղաքացին, վախի մէջ են գործարարները, վախի մէջ են քաղաքական գործիչները, իսկ երկիրը բռնած է բռնատիրութեան նամբան:

Ս.Դ.Է.Կ. ՄԱՍՆՈՅ ԴԻԻԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱԸ ԵՐԱԺԱՐԵՑԱԻ

Մայիս 12-ին Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Արթուր Բաղդասարեան յայտարարեց թէ պիտի հրաժարի իր պաշտօնէն: Անոր գլխաւորած «Օրինաց Երկիր» կուսակցութիւնը օր մը առաջ դուրս եկած էր իշխող համախոհական կառավարութենէն: «Ուզում եմ հեռանալ, դնալ իմ ճանապարհով, իմ քաղաքական ուժի ճանապարհով», - լրագրողներուն ըսաւ Արթուր Բաղդասարեանը յայտնելով, որ Մայիսի 22-ին՝ խորհրդարանի չաջորդ նիստին գրաւոր կը ներկայացնէ իր հրաժարականը:

Իր հրաժարականը եւ «Օրինաց Երկիր» դուրս գալը կառավարութենէն Բաղդասարեան բացատրեց տարածաշրջաններով՝ ներքին եւ արտաքին քաղաքականութեան հարցերով՝ աւելցնելով, որ տարածաշրջաններ ունեցած է նաեւ Քոչարեանի հետ: Այդ տարածաշրջանները կը վերաբերէին ընկերային ոլորտին, կուսակցային դէմ պայքարին, մասնաւորեցման գործընթացին, Եւրոպայի հետ կապերու խորացման եւ ՆԱՏՕ-ի հետ յարաբերութիւններուն:

Խօսելով ապագայի մասին,

խօսնակը ըսաւ. - «Իհարկէ, դառնում ենք ընդդիմադիր: Մենք ոչ մէկի տեղը չենք պատրաստուում զբաղեցնել, մենք ունենք մեր ուրույն տեղը: Այսօր չեմ ուզում խօսել ապագայ դաշնակիցների մասին»:

Պատասխանելով յարաշրկայ նախագահական ընտրութիւններուն իր մասնակցութեան մասին, Արթուր Բաղդասարեանը ըսաւ. - «Ոչինչ չեմ բացատրում: Կը գալ ժամանակը՝ քաղաքական վճիռներ կը կայացնենք»:

Ըստ կանխատեսումներու, մինչեւ Աժնոր նախագահի ընտրութիւնները այդ պաշտօնը ժամանակաւորապէս կը զբաղեցնէ փոխնախագահ Տիգրան Թորոսեան, որ նաեւ կը համարուի խօսնակի ամենահաւանական թեկնածու:

«Արդարութիւն» խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Ստեփան Դեմիրճեան «Օրինաց Երկիր» կուսակցութեան համախոհական իշխանութեան կազմէն դուրս գալու կապակցութեամբ «Ազատութիւն» ռատիոկայանին յայտարարեց «Կարող ենք արձանագրել, որ կողմնակից լինելու գոյութիւն չունի»:



ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Արթուր Բաղդասարեան (ձախիմ) կը գրուի իր հաւանական յաջորդ՝ Տիգրան Թորոսեանի հետ

ՀՆՉԱԿԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԵՏ



Հնչակեան Կուսակցութեան եւ Հայ Աւետարանական Համայնքի ղեկավարները հանդիպման աւարտին

Երեքշաբթի, Մայիս 16ին, 2006, կէսօրէ առաջ ժամը 11ին, նախապէս առնուած ժամադրութեամբ մը Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան Արևմտեան Ամերիկայի շրջանը ներկայացնող պատուիրակութիւն մը այցելութիւն տուաւ Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Միութեան Կլէնտէյլ քաղաքի կեդրոնը: Պատուիրակութիւնը ջերմօրէն ընդունուեցաւ Միութեան ընհանուր հովիւ՝ Վերապատուելի Յովսէփ (ձօ) Մաթոսեանի, Պատուելի Տիգրան Շանլեանի, Մեթր Վարուժան Պաղտասարեանի եւ գաղութիս

ծանօթ ազգայիններէն՝ Տիար Զաւէն Խանճեանի կողմէ: Հնչակեան պատուիրակութեան մաս կը կազմէին ընկերներ՝ Գաբրիէլ Մոլոյեան, Տօթթ. Արշակ Գազանճեան, Տօթթ. Յարութիւն Սաղրեան եւ Վահէ Աջապահեան: Հայ Աւետարանական Միութեան հովիւ Վերապատուելի ձօ Մաթոսեան բարի գալուստի ջերմ խօսքերով ողջունեց ներկաները, որմէ ետք տեղի ունեցաւ սրտբաց, անկեղծ եւ անկաշկանդ զրոյց՝ հայութիւնն

Շաբ.ը էջ 19

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԺԻՏՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆԱՑՆՈՂ ՕՐԻՆԱԳԻԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԿՐՆԱՅ ՅԵՏԱԶԳՈՒԻԼ

Թրքական մամուլի մէջ հրապարակուած տեղեկութիւններու համաձայն, Մայիս 12-ին Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաք եւ Թուրքիոյ վարչապետ Ռեջափ Էրդողան Վիեննայի մէջ հանդիպում մը ունեցած են ճաշի սեղանի շուրջ, որու ընթացքին նախագահը յայտնած է որ, Ֆրանսայի Ազգային Ժողովը ծանրաբեռնուած է եւ Հայոց Ցեղասպանութեան Ժխտումը քրէականացնող օրինագիծը կրնայ չքննարկուիլ այս նստաշրջանին:

Թրքական «Հուրիէթ» օրաթերթը կը հաղորդէ, որ Շիրաք Թուրքիոյ վարչապետին տեղեկացուցած է, թէ ֆրանսական կառավարութիւնը այս հարցը կը քննարկէ «մեծապէս յարգելով Թուրքիոյ դիրքորոշումը»:

Ըստ «Հուրիէթ»-ի, Թրքական դիւանագիտական աղբիւրները ֆրանսական կառավարութեան այս նոր դիրքորոշումը կը վերագրեն Թուրքիոյ մէջ ներդրում կատարող ֆրանսական ընկերութիւններու բարձրացուցած բողոքներուն:

Այս առթիւ կը յիշեցուի, որ Անգարայի եւ Փարիզի տնտեսական յարաբերութիւնները կը կազմեն շուրջ 10 միլիար եւրօ:

Շաբ.ը էջ 4

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԻՆՉՈՒ ԵՆ ՄԱՐԴԻԿ ԱՌՆԵՏ ԴԱՌՆՈՒՄ

Երբ այս կամ այն քաղաքացին (տուեալ դէպքում՝ գործարարը) փորձում է օրէնսդիր դառնալ այս կամ այն կուսակցութեան ցուցակով (տուեալ դէպքում՝ ՕԵԿ-ի), ապա գուտ տեսականօրէն ենթադրուում է, որ՝ ա. այդ քաղաքացին քաղաքական գործիչ է, բ. նա կիսում է տուեալ կուսակցութեան գաղափարախօսութիւնը: Եւ երբ այդ կուսակցութեան ղեկավարը յայտնում է դիրքորոշումներ, որոնց հետ արդէն պատգամաւոր դարձած այդ անձնաւորութիւնները համաձայն չեն, նրանք՝ այդ պատգամաւորները պարտաւոր են, դուրս գալով այդ կուսակցութիւնից կամ խմբակցութիւնից, նաեւ վայր դնել իրենց մանդատները: Դա է պահանջում տարրական քաղաքական եւ մարդկային էթիկան (ցաւալի է, որ օրէնքը դա չի պահանջում):

Բայց երբ խօսքը Շչի Մելոյի կամ Բուլեանտի Արշակի, ՕՉարի Տիկոյի կամ Բելաշիկոյի Գրիշի եւ նմանների մասին է, այդ բոլոր տեսական կառուցուածքները անիմաստ են եւ նոյնիսկ մի քիչ ծիծաղելի: Որովհետեւ նշուած անձնաւորութիւնները քաղաքական գործիչներ չեն, որեւէ գաղափար չունեն, որ կիսեն կամ չկիսեն, եւ իրենց քաղաքական կամ նոյնիսկ մարդկային վարկի մասին չեն մտածում. միակ բանը, որի մասին նրանք մտածում են՝ փող շինելն է: 2003-ին, տեսնելով, որ ՕԵԿ-ը պաշտպանում է Ռոբերդ Քոչարեանին եւ, հետեւաբար, կերակրատաշտից հեռու չէ, նրանք որոշեցին «չիթիլուել» այդ կուսակցութեանը, բնականաբար՝ նաեւ «մուծուելով» նրան: Երբ ՕԵԿ-ի ղեկավարի ինչ-ինչ բառեր եւ քայլեր չէ նախագահին դուր չեկան, նախագահականից կամ կառավարութիւնից նրանց հրահանգեցին կուսակցութիւնից դուրս գալ, եւ նրանք դա մի վայրկեանում արեցին: Իմիջիայնոց, հասարակութեան մէջ արկղաների եւ հղոնների այդ քայլն

առանձնապէս բացասական արձագանք էլ է չի ստանում՝ «դե, դելաւոյ տղերք են, փող են շինում, քաղաքականութիւնն իրենց հարիւր տարի պէ՞տք ա»: Բայց եթէ պէտք չի, ինչո՞ւ են Ազգային ժողովի պատգամաւորներ դարձել:

Թէեւ այդ հարցի պատասխանն էլ է յայտնի. նրանք գնում են

իշխանութիւնը կարող է նրանց ոչ միայն սնանկացնել, այլեւ նստացնել: Պարզ է որ դա վերաբերում է ոչ միայն ՕԵԿ-ից փախածներին, այլեւ Աժ բոլոր գործարար պատգամաւորների՝ խումբ-խմբակցութիւնների անդամ կամ անկախ

Աժ պատգամաւորական «տանիք» ունենալու համար: Իսկ ինչու են այդ մարդիկ այդքան կառավարելի բարձրագոյն իշխանութեան համար, դա էլ է պարզ. որովհետեւ նրանց տնտեսական գործունէութիւնը հեռու է օրինական լինելուց: Մասնաւորապէս, նրանք թաքցնում են իրենց եկամտների մեծ մասը: Հետեւաբար, իշխանութիւնը կարող է նրանց ոչ միայն անանկացնել, այլեւ նստացնել: Պարզ է, որ դա վերաբերում է ոչ միայն ՕԵԿ-ից փախածներին, այլեւ Աժ բոլոր գործարար պատգամաւորներին՝ խումբ-խմբակցութիւնների անդամ կամ անկախ: Նրանք բոլորը ենթական են մանիպուլյացիայի՝ նախագահականից եկած մատի մէկ շարժումով: Խօսքը, այսպիսով, Աժ ճնշող մեծամասնութեան մասին է: Խորհրդարան, որպէս պետական եւ քաղաքական ինստիտուտ, Հայաստանում գոյութիւն չունի: Եւ յաջորդ խորհրդարանն այս առումով աւելի վատը կը լինի:

ԱՐԱՄ ԱՐԱՎԱՄԵԱՆ «ԱՌԱԻՕՏ» 5-16-04

ՇՈՒՆԸ ՏԻՐՈՋԸ ԶԻ ԾԱՆԱԶՈՒՄ

Արթուր Բաղդասարեանի հրաժարականով, փաստօրէն, լրիւ յօդա ցնդեց կողմիցիայի առանց այդ էլ փխրուն գաղափարը, եւ եթէ որոշ լրագրողներ եւ գործիչներ կողմիցիայի այս պառակտումն անակնկալ են համարում, մենք աւելի զարմացած ենք այն փաստից, որ էն գլխից անմիաբան ու անգաղափար այդ կողմիցիան մեծ ձիգեր ու ջանքեր գործադրելով՝ այսքան երկար գոյատեւեց:

Մինչ որոշ ընդդիմադիրներ ոգեւորուած ձեռքերն են շփում, շտապենք նրանց հիասթափեցնել ու ասել, որ այս պառակտումից ո՛չ ընդդիմութիւնն է շահելու եւ ո՛չ էլ մանաւանդ՝ ժողովուրդը:

Այս պառակտումից ընդդիմութիւնը միգուցէ շահեր, եթէ, իհարկէ, ընդդիմութիւնը որպէս այդպիսին գոյութիւն ունենար:

Ժողովուրդն էլ, միգուցէ շահեր, եթէ Արթուր Բաղդասարեանը լինէր այն անհատը, որը ժողովրդին յոյս ու հաւատ ներշնչեր: Իրականում, Արթուր Բաղդասարեանը յոյս ու հաւատ էր ներշնչում մի խումբ նոմենկլատուրային ուսուցչուհիների ու դպրոցի սնորհներ:

ների, որոնք բոլորն էլ շատ շուտով հանրապետականներ կը դառնան (եթէ արդէն չեն դարձել):

Այս ամբողջ պատմութիւնից

Այս պառակտումից ո՛չ ընդդիմութիւնն է շահելու եւ ո՛չ էլ մանաւանդ՝ ժողովուրդը

շահողը, թերեւս, հանրապետականներն ու դաշնակցականներն են լինելու. նրանք միմեանց միջեւ համամասնօրէն կը բաժանեն «Օրինաց երկրին» պատկանող պաշտօնները եւ շուրջ մի տարի կ'ըմբռնեն դրանք՝ միմեանց մի որոշ ժամանակ արտաքուստ հանդուրժելով, քանի դեռ ընտրարշաւն ու Ազգային ժողովի նոր ընտրութիւնները չեն սկսուել:

Գալիք ընտրութիւնները հետաքրքիր են լինելու նրանով, որ ինչպէս ժողովուրդն է ասում, «շունը տիրոջը չի ճանաչելու»:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ «ՏԱՐԵԳԻՐ» 5-16-06

ՊԵՏԱԿԱՆ ԴԱԻՃԱՆՈՒԹԵԱՆ

ՄԵՆԱՆԻԿԱՆ

Մի երկու տարի առաջ Հանրային հեռուստաընկերութիւնը գեղեցիկ հարցազրոյց էր նկարել Ռոբերդ Քոչարեանի հետ: Սա մի քարի վրայ նստել ու պատմում էր, թէ ինչպէս են իրենք Հայաստանի իշխանութիւններից թաքուն ազատագրել Շուշին: Հարցազրոյցը գեղեցիկ էր նկարուած (քարի վրայ նստելու Քոչարեանի դիրքը, վզի մկաններն ընդգծող մայկան, «արծուէնի» հայեացքը եւ այլն), բայց Քոչարեանն, իհարկէ, սուտ էր ասում: Պարզապէս նա գիտէր՝ Հայաստանի նախկին իշխանութիւններն իր սուտը չեն բացայայտելու: Հո թէ՛ն խոստովանելու, որ ոչ միայն տեղեակ էին ամէն ինչից... Լաւ, դա թողնենք:

Իսկ անա մի քանի օր առաջ Քոչարեանը (արդէն ոչ թէ վզի մկաններն ընդգծող մայկայով, այլ կոստիւմով) գնաց ու Յաղթանակի Չքօսայգում ծաղկեպսակ դրեց Մեծ հայրենականի զոհերի յուշարձանին: Իսկ Շուշիի ազատագրման օրը եռաբլուր չգնաց: Երեւի սահիւրուած էր: Փոխարէնը՝ հայկական հեռուստաընկերութիւնները, ձեն-ձենի տուած, ամբողջական մէջբերումներ էին անում ատրպէյճանական մամուլից: Բանն այն է, որ Ատրպէյճանի խորհրդարանի նախկին խօսնակ եւ նախկինում Ատրպէյճանի նախագահի պաշտօնակատար Եսդուր Մամեդովը մի հարցազրոյցում յայտարարել էր, թէ իբր 1992-ի Մայիսի 8-ին (հենց Շուշիի ազատագրման օրը) ինքը, Լեւոն Տէր-Պետրոսեանը եւ Իրանի նախագահ Ռաֆիկ Իսխանովը թեհրանում ստորագրել են մի համաձայնագիր, որով Տէր-Պետրոսեանը Ղարաբաղը ճանաչել է որպէս Ատրպէյճանի մաս:

Այն, որ Եսդուր Մամեդովը սուտ է ասում, ցանկացած տրամաբանող մարդու համար ակնյայտ է: Եթէ նման փաստաթուղթ ստորագրուած լինէր, Ատրպէյճանն առ այսօր մի հազար անգամ հրապարակած կը լինէր դա (մի հինգ հարիւր անգամ էլ դաշնակները հրապարակած կը լինէին):

Բայց ինչիւրը միայն սա չէ: Պրոբլեմն այն է, որ եթէ Հայաստանն իսկապէս նորմալ երկիր լինէր, Եսդուր Մամեդովի վերոյիշեալ յայտարարութիւնը պէտք է հերքէինք ոչ թէ մենք, այլ Հայաստանի այսօրուայ իշխանութիւնները: Նրանք պիտի հրապարակէին թեհրանում ստորագրուած փաստաթուղթը, նրանք պիտի բացայայտէին ատրպէյճանական կեղծիքը, մի խօսքով՝ նրանք պիտի պաշտպանէին Հայաստանի եւ Ղարաբաղի շահերը: Եւ ոչ թէ նախագահի աշխատակազմի ինչ-որ պաշտօնեայ պիտի հեռուստաընկերութիւններին հրամայէր գովազդել ատրպէյճանական քարոզչութիւնը՝ ի վնաս Հայաստանի (բայց՝ յօգուտ Քոչարեանի):

Այդ ինչպէ՞ս է պատահում, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները բացայայտօրէն յայտարարում են, թէ Հայաստանը համաձայնուել է փուլային տարբերակին եւ պատրաստ է առանց որեւէ նախապայմանի գօրքերը դուրս բերել ազատագրուած տարածքներից, ու հայրենի հեռուստաընկերութիւնները ձայն-ծայտուն չեն հանում (լաւագոյն դէպքում, երբ բանը բանից անցնում է, վարդան Օսկանեանը գլուխը որեւէ ծակից հանում է ու գաւառական ծաղրածուի միապաղաղութեամբ յայտարարում, թէ այդ ամէնը սխալ թարգմանութեան հե-

տեւանք է): Ի վերջոյ, վարդան Օսկանեանը դարաբաղեան կարգաւորման գործընթացին մասնակցել է եւ նախկին, եւ ներկայ իշխանութիւնների օրօք, նա չգիտի, որ

Օսկանեանը դարաբաղեան կարգաւորման գործընթացին մասնակցել է եւ նախկին, եւ ներկայ իշխանութիւնների օրօք, նա չգիտի, որ Թեհրանում ստորագրուած փաստաթղթում նման բան չկայ:

Թեհրանում ստորագրուած փաստաթղթում նման բան չկայ: Ինչո՞ւ նա է բերանը ջուր առել: Թէ՛ նա նոյնպէս վաղուց արդեն ոչ թէ Հայաստանի շահերն է պաշտպանում, այլ անձամբ Ռոբերդ Քոչարեանի: Իսկ գուցէ նա չի՞ հասկանում, որ անձամբ Քոչարեանին վաղուց արդէն պէտք է (եւ առաջիկայում աւելի է պէտք գալու) ոչ թէ արտգործնախարար, այլ փաստաբան: Լա՛ւ փաստաբան:

Այսպէս թէ այնպէս, դեռեւս ուշ չէ: Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործերի նախարարութիւնը դեռեւս կարող է պաշտօնապէս հերքել Եսդուր Մամեդովի յայտարարութիւնները եւ դրանով իսկ ապացուցել, որ Հայաստանն աշխուժեցնելու պետութիւն է եւ ոչ թէ անձնական պուճուր շահերով առաջնորդուող պարտկոծի կողմից ղեկավարուող «օբիեկտ»: Ի վերջոյ, պետական դաւաճանութիւնը նոյնպէս քրէօրէն հետապնդելի արարք է: Իսկ կալանաւորի գոլաւոր համազգեստը վզի մկանները նոյնքան լաւ է ընդգծում:

ՀՐԱՅՐ ԱԻԵՏԻՍԵԱՆ «ԶՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՏՈՒՄԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամբիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱՋԱՆԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ԳԱՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
3ԱՐԻԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ
Յեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party of
Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ԼՈՒՐԵՐ

«ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆԸ ՉՊԵՏՔ Է ՄԱՍՆԱԿՑԻ ԱԺ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՐՅԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ»

ԵՐԵՒԱՆ, «ԼՐԱԳԻՐ»։ Ընդդիմութիւնը չպէտք է մասնակցի ԱԺ նոր նախագահի ընտրութեանը։ Այդ մասին Մայիսի 16-ին ասել է ԱԺՄ ղեկավար, ԱԺ պատգամաւոր, Արդարութիւն դաշինքի անդամ Վազգէն Մանուկեանը։ Նա շեշտել է, որ արտադրական է անձամբ իր կարծիքը, աւելացնելով, որ ԱԺ նոր նախագահի ընտրութիւնը Ռեբերգ Քոչարեանի խաղն է, ով որոշել է իր համար ենթակաշնշանակել խորհրդարանի ղեկավարի աթոռին։

Ինչ վերաբերում է լուրերին, թէ ընդդիմութիւնը կարող է ԱԺ նախագահի թեկնածու առաջադրել Վիկտոր Դալլաքեանին կամ Արտաշէս Գեղամեանին, Վազգէն Մանուկեանը ասում է, որ նման լուրեր միշտ էլ կարող են լինել, եւ կարող են միշտ էլ շրջանառուել տարբեր անուններ։

ԱԺՄ ղեկավար Վազգէն Մանուկեանը տեսակէտ է յայտնել, որ ներքաղաքական ներկայիս իրավիճակը հոգեհարազատ է ՀՅԴ համար։

ԱՐԵՒՄՈՒՏՔԸ ՍՊԱՍՈՒՄ Է ԱՅԼԸՆՏՐԱՆՔԻ, ԻՍԿ ԶԱՅԱՍԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ ՉՈՒՆԻ

ԵՐԵՒԱՆ, «ԼՐԱԳԻՐ»։ Ազգային ժողովի պատգամաւոր Շաւարշ Քոչարեանը Մայիսի 13-ին Ազգակալ ակումբում յայտարարել է, որ Հայաստանի խորհրդարանի 2007 թուականի ընտրութեան վերաբերել արեւմուտքի գնահատականը ոչ այնքան կախուած է կեղծիքի աստիճանից, որքան քաղաքական դաշտի այլընտրանքից։

«Բոլոր գնահատականները Հայաստանի ընտրութիւններին տուած, օբիեկտիւ են, բայց հետեւողականութիւնը կախուած է նրանից, երբ արեւմուտքը տեսնում է այլընտրանք։ Կա այլընտրանք, արեւմուտքը հետեւողական է», ասում է Շաւարշ Քոչարեանը։

Իսկ Հայաստանի համար, ըստ ԱԺԿ նախագահի, այլընտրանք չունի եւրախիտեզրուածը։ Նա նշում է, որ նոյնիսկ իշխանութիւնն է դա հասկանում, ինչի վկայութիւնն ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարեանի յայտնի յայտարարութիւններն են։ «Այն անգամանքը, որ ՕԵԿ-ն այսօր շեշտում է ժողովրդավարացում, եւրախիտեզրուած։ Սա ինքնին դրական է, դրական է այն առումով, որ ցոյց է տալիս, որ այլընտրանք չկայ Հայաստանի համար։ Այսինքն դա ցոյց է տալիս, որ նոյնիսկ ուժեղացում դա գիտակցում են, ուղղակի Արթուր Բաղդասարեանը հակադրուելով իշխանութեան միւս թեւերին, շատ աւելի սուր դրեց ելնելով ինչ ինչ նպատակները»։

ԵՐԵՒԱՆՈՒՄ ՊԱՇՏՕՆԱՊԵՍ ԲԱՑՈՒԵՑ MICROSOFT-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆ

Երեքշաբթի, Մայիս 16-ին պաշտօնապէս բացուեց համակարգչային ծրագրերի եւ օպերացիոն համակարգերի արտադրութեան համաշխարհային առաջատար Microsoft-ի ներկայացուցչութիւնը Հայաստանում։

«Չէք կարող երեւակայել, թէ ինչ հպարտ եւ ուրախ եմ այսօր Հայաստանում լինել։ Որովհետեւ ծնունդ եմ Փարիզում, ծնողներս հայ են, եւ ինձ համար սա մեծ իրադարձութիւն է», - ասաց Microsoft-ի Կենտրոնական եւ Արեւելեան եւրոպայի տարածաշրջանային փոխնախագահ Վահէ Թորոսեանը՝ շեշտելով, թէ ընկերութեան ղեկավարութիւնը նման որոշում է կայացել՝ հաշուի առնելով տարածաշրջանի երկրներում,

«Բոլոր նեղ վիճակներում, առաջին պաշտպանը, լինի դա հանրաքուէի կեղծիքները, լինի դա Օրինաց երկրի գործը։ Առաջին շարքում կանգնում է դաշնակցութիւնը, եւ դրան ազգային պետական քաղաքական գոյն է տալիս։ Հանրապետական կուսակցութիւնն աշխատում է այդպիսի գոյներ չտալ, ասում է՝ դե տղեք ջան, հիմա ապրում ենք էլի, թողէք նորմալ ապրենք։ Դաշնակցութիւնը դրան ինչ որ երանգ է տալիս։ Դա է վտանգաւորը։ Քաղաքականացում է, այն անիրաւական վիճակը, որում մենք գտնուում ենք», ասում է Վազգէն Մանուկեանը։

Նա ազնիւ է համարում նաեւ վարչապետ Անդրանիկ Մարգարեանի խօսքը, որ հնչել է Մայիսի 15-ին, Ազատութիւն ռադիոկայանով։ Վարչապետն ասել է, որ դժուար է լինել ընդդիմադիր եւ զբաղուել բիզնեսով։ Վազգէն Մանուկեանն ասում է, որ դրական է, երբ վարչապետը գոնէ ազնուօրէն խոստովանում է իրավիճակը։

ԶԱՅԱՍԱՆԻ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԶԱՅԱՍԱՆԻ ՕՐՅՆԵՐԳԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»։ Հայաստանի մտաւորականութեան մի խումբ ներկայացուցիչներ այսօր բաց նամակ են չղել երկրի նախագահին, խորհրդարանի խօսակցին եւ վարչապետին՝ առաջարկելով վերականգնել Խորհրդային Հայաստանի օրհներգը, որի երաժշտութեան հեղինակն է աշխարհահռչակ կոմպոզիտոր Արամ Խաչատրեանը։

Հայաստանի խորհրդարանը Խորհրդային Հայաստանի օրհներգը չհեղեւ է յայտարարել 1991 թուականին՝ պետական օրհներգ հռչակելով «Մեր հայրենիքը»՝ հիմք ընդունելով 1918-1920 թուականների Հայաստանի առաջին հանրապետութեան օրհներգը։

Մայիսի սկզբին Հայաստանի կառավարութիւնը մրցոյթ է յայտարարել պետական նոր օրհներգի երաժշտութեան եւ բառերի համար։

Նամակի հեղինակները յոյս են յայտնում, որ «Հայաստանի ղեկավարները դրականօրէն կ'արձագանքեն իրենց առաջարկին, եւ պետութիւնը կ'ստանայ իր պատ-

մութեանը եւ ապագային արժանի օրհներգ»։

Նամակը ստորագրել են կոմպոզիտորներ Ալեքսանդր Յարուսթիւնեանը, Էդուարդ Միրզոեանը, երգչուհի Գոհար Գասպարեանը, դերասան Սօս Սարգսեանը, դիրիժոր Յովհաննէս Չեքիշեանը, ինչպէս նաեւ գիտնականներ, գրողներ, ստեղծագործական միութիւնների ղեկավարներ։

«Լաւագոյն կոմպոզիտորի լաւագոյն տարբերակն է (Խորհրդային Հայաստանի) օրհներգի երաժշտութիւնը, բայց տեքստը պէտք է փոխել», - «Ազատութիւն» ռադիոկայանին այս կապակցութեամբ ասաց Գոհար Գասպարեանը։

Միւս կողմից ժամանակ, Հայաստանի գրողների միութեան նախագահ Լեւոն Անանեանը, որը չի ստորագրել նամակը, գտնում է, որ «21-րդ դարում մենք պէտք է ունենանք նոր օրհներգ»։

«Եթէ կառավարութեան յայտարարած մրցոյթի արդիւնքները մեզ չբաւարարեն, մենք կը միանանք նամակի հեղինակների առաջարկութեանը», - աւելացրեց նա։

ՈՐՆ Է ԼԱՒ՝ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ԿԵՂԾԵՆ ՍԱՓՐԱԳԼՈՒԽՆԵՐԸ, ԹԷ ՌԻՄՈՒՑԻՉՆԵՐԸ

ԵՐԵՒԱՆ, «ԼՐԱԳԻՐ»։ Հայաստանի կառավարման համակարգում նկատու է հետաքրքիր միտում։ Բարձրաստիճան պաշտօնեաները բազմապատկուծ են իրենց զբաղեցրած պաշտօնները, եւ հիմնականում կրթութեան ոլորտի հաշուին։ Մայիսի 12-ին ՀՊՃՀ (Հայաստանի Պետական ծարտարագիտական Համալսարան) շրջանաւարտների խորհրդի նախագահ է ընտրուել, ՀՊՃՀ կիբեռնետիկայի ֆակուլտետի ուսանող, արդէն վեց տարի ՀՀ վարչապետ աշխատող Անդրանիկ Մարգարեանը։ ՀՊՃՀ շրջանաւարտների խորհրդի նիստի ընթացքում վարչապետն ընտրուեց միաձայն։ Թերեւս Մայիսի 12-ը Անդրանիկ Մարգարեանի համար երջանիկ թիւ է։ Վեց տարի առաջ հենց Մայիսի 12-ին նա նշանակուեց ՀՀ վարչապետ, եւ այն ժամանակ դեռ ոչ մէկի մտքով չէր անցնում, որ Անդրանիկ Մարգարեանը դառնալու է ՀՀ նորագոյն պատմութեան ամենակարակեաց վարչապետը։ Իհարկէ, ինքը վարչապետը պաշտօնավարման մէկ տարուց չետոյ յայտարարեց, որ վարչապետի աշխատանքը նման է գլադիատորի։ Հետաքրքիր է, թէ վարչապետն ինչի կը նմանեցնի բուհի շրջանաւարտների խորհրդի նախագահի պաշտօնը։ Հաշուի առնելով բուհի տեխնիկական թեքումը, թերեւս վարչապետն իր նոր պաշտօնը կը նմանեցնի տերմինատորի։

Սերժ Սարգսեանից չետոյ վարչապետը երկրորդն է, որ ղեկավարում է շրջանաւարտների միութիւն։ Պաշտպանութեան նախարարը ղեկավարում է համալսարան-

ների շրջանաւարտներին։ Պոլիտեխնիկը թերեւս իր շրջանաւարտների բանակով չի գիշուած պետհամալսարանին, իսկ դա արդէն բաւական մեծ տոկոս է։ Բայց եթէ Սերժ Սարգսեանը ձեռնամուխ է եղել միայն բարձրագոյն համակարգին, ապա Անդրանիկ Մարգարեանն իր վերահսկողութեան տակ է առնում նաեւ միջնակարգ կրթահամակարգը։ Նա ցուցադրաբար ուսուցիչներ ընդունեց իր կուսակցութեան կազմ, եւ այն էլ Մայիսի 1-ին, ցոյց տալու համար, որ իր համար իսկական աշխատաւորը ուսուցիչն է։ Կը մնայ միայն ուսուցչին էլ համոզել, որ իսկական աշխատանքը դա ընտրութիւնն է։ Իսկ դրա համար մեծ ջանք պէտք է, պէտք է միայն մի թեթեւ ակնարկել, որ օպտիմալացման ծրագիրը կիսատ է մնացել, կամ վերանայման կարիք ունի։

Միւս կողմից, գովելի է, որ Հայաստանի պաշտօնական վերնախաւը այդպէս հաւեսով «կպել» է կրթութեան ոլորտին եւ ցանկութիւն ունի «ճանաչել գիմաստութիւն եւ գիւրատ, իմանալ զբանս հանձարոյ»։ Գովելի է, եւ ուրախալի։ Աւելի լաւ է ընտրութիւնը կեղծեն ուսուցիչներն ու դասախօսները, քան սափրագլուխները։ Նրանց միջեւ մի բան ես սովորեցնում, ԵՍՀԿ-ն իմանում է։ Իսկ ուսուցիչներին ու դասախօսներին ոչ միայն սովորեցնելու կարիք չկայ, այլ դեռ մի բան էլ իրենք կը սովորոցնեն։ Դրանից բացի, լաւ է նաեւ ընտրողի համար։ Սափրագլուխը խփում է, իսկ ուսուցիչը՝ բացատրում։

մասնաւորապէս Հայաստանում, առկայ գիտելիքների բարձր մակարդակը։ Նրա տեղեկացմամբ, Microsoft-ի հայաստանեան անելիքները առաջինը կը լինի Windows XP ծրագիրը հայերէն թարգմանելը եւ արդէն ամուսն վերջին սպառողներին մատուցելը։

Microsoft-ի համար համընդհանուր խնդիր է մտաւոր սեփականութեան իրաւունքների՝ մասնաւորապէս իր ծրագրերի պաշտպանութիւնը չարտօնուած օգտագործումից։ Վահէ Թորոսեանն ասաց, թէ իրենք այդ առումով լուրջ խնդիրներ ունեն ԱՊՀ բոլոր երկրներում, այդ թւում եւ Հայաստանում։

ԼՈՒՐԵՐ

ԴԵՍՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ՅՈՒՆԱՐԱՅՈՒԹԵԱՆ ԶԱՅՐՈՅԹԻ ԱՌԱՐԿԱՅ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԼՐԱՏՈՒ, ԱԹԷՆՔ: Յունաստանում ՀՀ դեսպան վահարամ կաթոնեանի գործունեության հետեւանքով յունահայերը եւ Հայաստանից գաղթած ու Յունաստանում հաստատուած մեծ թիւով մեր հայրենակիցները, հերթական անգամ ապրում են լարուած միջոցառում: Պատճառը «Եւրատեսիլ»-ի մրցույթին մասնակցող, Հայաստանի ներկայացուցիչ, Անդրէին դաշնակցութեան «Համագային»-ի համար քարոզչական նպատակով օգտագործելն է, որն իրականանում է դեսպան կաթոնեանի օգնութեամբ:



Երգիչ Անդրէին՝ որ կ'օգտագործուի քաղաքական նպատակներով

Երգիչը փաստօրէն կտրուած է տեղի հայկական համայնքից, նրա մշակութային եւ կրթական բոլոր կենտրոններէն, իհարկէ բացառութեամբ դաշնակցութեան հովանաւորութեան տակ գործողներէն:

Թեան «Գալիաքեան» վարժարան, եւ դա այն պարագային, երբ նա այցելել ու երգել է դաշնակցութեան հովանու տակ գործող դպրոցներում:

Ամենաշատ վրդովմունք առաջացնող եղել են հետեւեալ երկու դէպքերը. առաջին՝ Մայիսի 14-ին, կիրակի օրը, Անդրէին եւ Հայաստանից ժամանած մի խումբ երգիչ, երգչուհիների մասնակցութեամբ, հայ համայնքի համար կազմակերպուած համերգը համատեղ կազմակերպուել է ՀՀ դեսպանատունը - դաշնակցութեան «Համագային»-ը, փաստօրէն դուրս թողնելով համայնքի մշակութային հարցերով զբաղուող եւս երկու, գլխաւոր կազմակերպութիւններին («Հայաստան» հասարակական-մշակութային կենտրոնին, որը գլխաւորաբար զբաղուած է Հայաստանից գաղթածների հարցերով եւ Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան մշակութային «Արարատ» միութեանը): Երկրորդ՝ երգիչ Անդրէին հայցելու է Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան տեխնիկայով յաջորդ շաբաթը իր շարժումը Ռուսաստան կը ճանապարհուեն Մայիսի 23-ին 25-ին եւ 30-ին, սպառազինութիւնների եւ ռազմական տեխնիկայի մեծ մասը կը տեղափոխուի Հիւսիս-կովկասեան ռազմական օկուպի տարածք», - նշել է ԱՌԶ-ի փոխհրամանատարը:

Որոշ տեղեկութիւնների համաձայն, Յունաստանում ՀՀ դեսպանատան աշխատակազմը նոյնպէս դժգոհ է դեսպան կաթոնեանի նման վերաբերումներէն, որն անտեղի խոսովութիւն է առաջացնում հայ համայնքում: Համայնքի համար արդէն ամենեւին էլ զարմանալի չեն դաշնակցութեան նմանօրինակ մօտեցումները, սակայն՝ տարօրինակ, երբ դա արւուծ է ՀՀ դեսպանատան հետ միասին:

Յիշեցնենք, որ դեռեւս 2002 թ., դեսպան կաթոնեանի կարգադրութեամբ ֆուտբոլի Եւրոպայի առաջնութեան ընտրական մրցաշարի շրջանակներում, Աթէնքում տեղի ունեցած Յունաստան-Հայաստան հանդիպման համար հայ համայնքին յատկացուած տոմսերի տրամադրումը նոյնպէս յանձնուել էր դաշնակցականներին:

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՎԵՐՍԿՈՒՄ Է ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԴՈՒՐՍԲԵՐՈՒՄԸ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

ՄՈՍԿՈՒԱ, 15 ՄԱՅԻՍԻ, ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆ: Մայիսի 15-ին Ռուսաստանը վերսկսում է ծանր սպառազինութիւնների եւ ռազմական տեխնիկայի դուրսբերումը Ախալքալքի 62-րդ ռազմական բազայից (Վրաստան): Այս մասին իՏԱՌ-ՏԱՍՍ-ին յայտնել է Անդրկովկասի ռուսական զօրախմբի (ԱՌԶ) հրամանատարի տեղակալ, գնդապետ Վլադիմիր Կուպարաձէն: Ըստ նրա, այս տարուայ առաջին էջերը Ռուսաստան կ'ուղարկուի Ատրպէյճանով: Ծարժակազմում կը լինեն S-72 20 տանկեր եւ մարտական հետախուզական մեքենաներ: Մայիսից մինչեւ Սեպտեմբեր զինուորականները պէտք է Ռուսաստան տեղափոխեն 350 միւսուր ծանր զրահատանկային եւ յատուկ տեխնիկա, ինչպէս նաեւ դրանց զինամթերքներ:

«Մրազըրում է, որ ռազմական տեխնիկայով յաջորդ շարժակազմերը Ռուսաստան կը ճանապարհուեն Մայիսի 23-ին 25-ին եւ 30-ին, սպառազինութիւնների եւ ռազմական տեխնիկայի մեծ մասը կը տեղափոխուի Հիւսիս-կովկասեան ռազմական օկուպի տարածք», - նշել է ԱՌԶ-ի փոխհրամանատարը:

Կուպարաձէն ճշդել է, որ Գիւմրիի 102-րդ ռուսական ռազմական բազա (Հայաստան) առաջին էջերում սպառազինութիւն եւ ռազմական տեխնիկա չի փոխադրուել: «Տեխնիկայի եւ սպառազինութեան որոշ մասը մենք այնտեղ կը փոխադրենք աւտոմեքենաներով, առաջին աւտոշարափուը Հայաստան կը ճանապարհուի Մայիսի 18-ին», - պարզաբանել է նա:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՐԸ

Շարունակուած էջ 1-էն
Հարցին, թէ արդե՞ք, «Օրինաց երկիր»-ը կը յայտնուի ընդգիծադիր դաշտի վրայ, ՀԺԿ նախագահը պատասխանեց. - «Տեղ՝ ընդգիծադիր դաշտում տալիս է ժողովուրդը: Ժողովուրդն է գնահատական տալիս... Ժամանակը ցոյց կը տայ, կեանքը ցոյց կը տայ»:
«Իսկ եթէ նրանք ոչալ ընդգիծադիր ուժ դառնան, մենք չենք բացառում նաեւ համագործակցութիւնը», - աւելցուց Ստեփան

Դեմիրճեան:
«Ազգային Միաբանութիւն» ընդգիծադիր կուսակցութեան առաջնորդ Արտաշէս Գեղամեանը մեկնաբանելով «Օրինաց երկիր» խմբակցութեան որոշումը՝ դուրս գալ իշխանութեան, ըսաւ. - «Հերթական անգամ Ռուսերը Քոչարեանը եւ Պաշտպանութեան Նախարար Սերժ Սարգսեանը ցուցադրեցին Հայաստանի հանրութեանը, որ իրենք են ծնում իշխանութիւն, իրենք են իշխանութեան մէջ ծնում ընդգիծութիւն, եւ եթէ յանկարծ

ՍԵՒ ԾՈՎՈՒՄ ՍԿՍՈՒԵԼ ԵՆ ԿՈՐԾԱՆՈՒԱԾ ԻՆՔՆԱԹԻՈՒ «ՍԵՒ ԱՐԿՂԵՐ»-Ի ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ



Մայիս 3-ին կործանուած հայկական օդանաւի ծովէն հանուած բեկորները

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Մայիս 16-ին Սոչիում սկսուել են A320 հայկական կործանուած օդանաւի «սեւ արկղեր»-ի բարձրացման աշխատանքները. վաղ առաւօտից ծով է դուրս եկել ժամանակակից սարքաւորումներով զինուած «Նաւիգատոր» նաւը:

բարձրացնել յատուկ ռեբոտի օգնութեամբ, որն այս վայրում աշխատելու է առաջին անգամ: Ռուս մասնագէտների հետ, ըստ Արարատ Գոմցեանի, տեղում աշխատում են նաեւ ֆրանսիացիները:

Հարաւային Ռուսաստանում Հայաստանի գլխաւոր հիւպատոս Արարատ Գոմցեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում յոյս յայտնեց, որ այս անգամ մասնագէտներին կը յաջողուի ջրի երես հանել ինքնաթիռի կործանման գաղտնիքը պարունակող արկղերը:
«Սեւ արկղեր»-ը գտնուած են մօտ 500 մետր խորութեան վրայ, մասնագէտները ակնկալում են դրանք

«Եթէ եղանակային պայմանները թոյլ տան, որոնողական աշխատանքները կը շարունակուեն ողջ օրուայ ընթացքում», - յայտարարել է Ռուսաստանի տրանսպորտի նախարարութեան ներկայացուցիչ Ալեքսանդր Դաւիդենկոն:

Ռուսաստանի տրանսպորտի նախարար Իգոր Լեւիտինի խօսքով, Սեւ ծովի յատակից արկղերի բարձրացման աշխատանքները կարող են շարունակուել 2-3 օր:

ՀՐԱՆԴ ԴԻՆԿ. «ԵՍ ՅՈՅՍ ՈՒՆԵՄ ՄԻՆՉԵՒ ՎԵՐՋ ՏԱՆԵԼ ԻՄ ՊԱՅՔԱՐԸ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Պոլսոյ մէջ լոյս տեսնող «Ակօս» թերթի գլխաւոր խմբագիրը կրկին կանգնել է թուրքական դատարանի առջեւ: Այս անգամ Հրանդ Դինկին մեղադրում են դատարանի վրայ ճնշում գործադրելու մէջ:

«Նախորդ դատավճռից յետոյ ես յայտարարել էի, որ եթէ այս պատիժը չեղեալ չչայտարարուի, ես կը լքեմ թուրքիստան: Ինձ այս յայտարարութեան համար են ամբաստանում՝ մեղադրելով, թէ ես ցանկանում եմ դատարանն իմ ազդեցութեան տակ առնել», - երկուշաբթի օրը «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց Դինկը:

Այս գործով այսօր կայացած առաջին դատական նիստը (ինչպէս եւ վերջին շրջանի միւս աղմկահարուց դատավարութիւնները թուրքիստանում) ուղեկցուել է ազգայնականների կազմակերպած ցոյցով: Դատական նիստի ողջ ընթացքում, ինչպէս նաեւ դատարանի մատուցներում Հրանդ Դինկն ու նրան ուղեկցող անձինք եղել են ոստիկանութեան հսկողութեան ներքոյ:
«Դժբախտաբար դատավարութիւնը անապահով էր մեզ համար», - փոխանցեց Դինկը: - «Փողոցը լեցուն էր ազգայնամոլներով, եւ մեր մուտքի ու ելքի ընթացքին յարձակումներ եղան, նոյնիսկ՝ հարուածելու փորձեր»:

Դատավարութիւնը չետաձգուել է մինչեւ Յուլիսի 7-ը:

այդ ընդգիծութիւնը սահմանուած չափից կէս քայլ անգամ առաջ է անում, պատժուած եւ դատապարտուած է»:

կան երկրում նորմալ երեւոյթ կը լինէր, ուղղակի՝ ուշացած»:

Արտաշէս Գեղամեանը կարծիք յայտնեց, որ «Օրինաց երկիր»-ը ստեղծուած է Սերժ Սարգսեանի անմիջական մասնակցութեամբ:
«Եթէ Արթուր Բաղդասարեանն ընտրի քաւութեան ճանապարհը, «Ազգային Միաբանութիւն»-ը մեծ պատրաստակամութեամբ կ'ողջունի դա», - յայտարարեց ընդգիծադիր գործիչը:
Ընդգիծադիր պատգամաւոր, ԱԺՄ նախագահ Վազգէն Մանուկեան իր կարգին յայտարարեց, որ «Օրինաց երկիր»-ի՝ համախոհութեանն ղուրս գալը «դեմոկրատա-

«Բայց մեր նման երկրում դա ոչ թէ քաղաքական, գաղափարական տարբերութիւնների արդիւնք է, այլ այն, որ արհեստական ձեւով ստեղծուած են կուսակցութիւններ եւ արհեստական ձեւով իշխանութիւնների կողմից կարողանում են քանդուել այդ կուսակցութիւնները»:

Վարչապետ Անդրանիկ Մարգարեան մեկնաբանելով քաղաքական այս զարգացումները իր կարգին յայտարարեց. - «Օրինաց երկիր»-ի հետ ոչ մի արտաուց բան տեղի չունեցաւ եւ Արթուր Բաղդասարեանը գիտէր ուր է գնում, եւ սա մէկ օրուայ բան չէր»:

ԱԶԳԱՅԻՆ

ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԹԱՂՈՒՄ ԸՆԿԵՐ ՅՐԱՆԴ ԳԱՆԳՐՈՒՆԻ

Նորօք հանգուցեալ ընկեր Հրանդ Գանգրունիի յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 10 Մայիս 2006, կէսօրէ ետք ժամը 4:00ին: Վաստակաւոր ընկերը դադարը, Հ.Մ.Մ.ի փողերախումբի ընկերակցութեամբ, Տիրուհի Ուսանողական Երիտասարդական Միութեան ընկերներու սամբարձ հասցուցին Նոր Հաճնոյ Ս. Գեորգ եկեղեցին: Պաշտօնական հիւրերու շարքին էին մամլոյ սենտիքայի նախագահ Մըլիսէմ Քարամ, պետական երեսփոխաններ՝ ընկ. Եղիկ Ճէրէճեան եւ մեթր Սերժ Թուրապր-գիսեան, Ս.Դ.Հ.Կ. Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմնի ատենապետը եւ ներկայացուցիչ ընկերներ, կրթական մշակներ, գաղափարի ընկեր-ընկերուհիներ, զանազան կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, հայկական վարժարաններու տնօրէններ եւ ուսուցիչներ:



Ահարոն Շիրտըմեան: «Դժուար է խօսիլ անհատի մը մասին, որուն հետ վերջին քսան տարիներուն ընդհանրապէս, իսկ չորս տարիներուն յատկապէս, գրեթէ ամէնօրեայ դրութեամբ զրուցած ենք հայ մամուլի ճակատագիրին, ազգային ու հայրենական ցաւերու մասին: Ընկեր Հրանդ Գանգրունի կը տալնայ մեր ազգային ցաւերով: Իր գաղափարական, հայրենասիրական եւ ազգային յօգուածները ուղեցոյց էին մեր երիտասարդութեան: «Արարատ»ը դարձած էր իր երկրորդ տունը, իր հոգեգաւակը, եթէ կ'ուզէք: ... Բայց այսօր, անհուն ակաճածանքով ու մորմոքով հողին պիտի յանձնենք մեր շատ սիրելի ընկեր Հրանդ Գանգրունիին»: Այս առիթով ընկեր Ահարոն Շիրտըմեան յանուն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմնին եւ «Արարատ» պաշտօնաթերթին, իր խորագրած ցաւակցութիւնները փոխանցեց հանգուցեալի ընտանեկան պարագաներուն եւ գաղափարակիցներուն:

Դամբանական խօսքերէն ետք, ընկեր Հրանդ Գանգրունիի ուսամբարձ դազող սգակիր թափօրով եւ Հ.Մ.Մ.ի փողերախումբին ընկերակցութեամբ ուղղուեցաւ դէպի Ֆրոն էլ Շրպէի Ազգային գերեզմանատուն: Լիբանանեան, Հայրենական եւ կուսակցական քայլերգներու կատարողութենէն ետք, ընկեր Հրանդ Գանգրունիի մարմինը ամփոփուեցաւ Հնչակեան կուսակցութեան պանթէոնին մէջ:

Յարգանք իր յիշատակին:

Լիբանանի Հայոց Թեմի բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Գեղամ Եպս. Խաչերեան վեր առաւ հանգուցեալ ընկերը դերակատարութիւնը Լիբանանի ազգային եւ կրթական կեանքին մէջ: Ան յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի եւ Լիբանանի Ազգային Իշխանութեանց ցաւակցութիւն յայտնեց հանգուցեալի գաղափարակից ընկերներուն եւ ընտանեկան պարագաներուն: Օշական Քհնյ. Աջըգեան ընթերցեց ընկեր Հրանդ Գանգրունիի մահուան առիթով Ամենայն Հայոց Գարեգին Բ. Հայրապետի ցաւակցագիրը:

Մամլոյ սենտիքայի նախագահ Մըլիսէմ Քարամ յայտնեց իր վշտակցութիւնները ընկերը մահուան առիթով, վեր առնելով հանգուցեալ ընկերը ծառայութիւնները սենտիքայական իրաւունքներու պաշտպանութեան ի ինդիր: Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան խօսքը փոխանցեց ընկ. տոքթ. Մացակ Փօլատեան: Ան անդրադարձաւ ընկերը կրթական, լրատուական եւ գրական մարզերուն մէջ ծաւալած գործունէութեանց, յատկապէս ծանրանալով հանգուցեալի կուսակցութեան հանդէպ հաւատարմութեան եւ նուիրուածութեան: Յանուն Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմնի եւ «Արարատ» պաշտօնաթերթին կողմէ խօսք առաւ ընկեր

ՄՈՍ ՍԸ ԵՒՍ ՇԻՋԵՑԱԻ

Դժուար է պատկերացնել «Արարատ»ը առանց ընկեր Հրանդ Գանգրունիի: Սակայն ճակատագիրը վճռած էր վերջակէտ դնել անոր կեանքին: Եւ ահա, Երկուշաբթի առաւօտեան ժամը 10:00ին, ան հրաժեշտ տուաւ մեզի, սուգի մատնելով «Արարատ»ը եւ Լիբանանի Շրջանի ու աշխարհացրիւ իր գաղափարական ընկերները:

Համեստ նուիրական անձ մը՝ Հրանդ Գանգրունի պատանեկան տարիքէն գինուորագրուեցաւ Հնչակեան կուսակցութեան «սուրբ ծառայութեան», ինչպէս կ'ըսէր ինք: Տակաւին պատանեկութենէն հազիւ երիտասարդութիւն թեւակոխած, հրաւիրուեցաւ «Արարատ» պաշտօնաթերթի խմբագրութիւն: Խմբագրեց պարբերաթերթեր, ստորագրեց հարիւրաւոր յօդուածներ, մնաց պատնէշի վրայ, իր դաւանած գաղափարախօսութեան պատգամաբերներէն մէկը: Հարագատներն են վկայողները, թէ կեանքին մինչեւ վերջին օրը մնաց «Արարատ»ի ընթերցող: Մահուան սնարին տակէն հանած են «Արարատ»ի վերջին թիւը:

Ընկ. Հրանդ Գանգրունի միաժամանակ ծառայեց հայ դպրոցին, բայց բոլորէն աւելի, առաջնահերթօրէն ան մնաց հարագատ՝ պատմաբանի կոչումին: Թերեւս այս էր պատճառը, որ իրեն զլացուեցաւ ուրիշներու նման Հայաստանէն մնացուն հրաւերներ ստանալ կամ հայրենիքի մէջ լոյս ընծայել պատմական հրատարակութիւն մը: Անոր պատմական աշխատութիւնները ոչ միայն իբրեւ աղբիւր ծառայեցին հայրենի բազմաթիւ պատմաբաններու, ինչպէս ձոն Կիրակոսեան եւ Լենտրուշ Խուրշուտեան, այլեւ շարժառիթ՝ վերանայելու իրենց պահպանողական ու սխալ թէզերուն: Շատ յաճախ

գրկուելով անձնական երջանկութեանէն, Հրանդ Գանգրունի ապրեցաւ ու ստեղծագործեց հայրենիքին յուզումներով ու տաղանայներով, ի շահ Հնչակեան կուսակցութեան վերելքին ու հեղինակութեան: Հրանդ Գանգրունի չխոնարհեցաւ նորարարութեան տարագով խեղուած խեղճ պատմագիտութեան առջեւ, ու շեշտեց հայրենիքի վերափոխութիւններուն ի տես հնչակեան ըմբռնողութեան անժամանցելիութիւնը. «Մեր անցեալը որքան ալ դառն ըլլայ, յանուն լաւ ապագային պատրաստ ենք զայն լիչել: Անցեալը ուրացողը չի կրնար ապագայ կերտել», - յաճախ կը կրկնէր մեր ընկերը խմբագրատան մէջ եւ գրոյցներուն ընթացքին:

Իբրեւ հասարակական գործիչ, ան մատուցած է բազմաթիւ ծառայութիւններ: Հիմնադիրներէն է Նոր Սերունդ Մշակութային Միութեան եւ կուսակցութեան երիտասարդական շարժումին՝ Տիրուհի Ուսանողական Երիտասարդական Միութեան: Կուսակցութեան մէջ վարած է բազմաթիւ պատասխանատու պաշտօններ, միշտ ցուցաբերած է գիտակից ու գոհաբեր ոգի, եղած է կուսակցութեան թէզերուն հլու հետեւորդը. թոյլատու չէր, ոչ ալ ընդառաջող՝ անհատական շահերով առաջնորդուողներուն: Մեծ թիւով սփիւռքահայ սերունդներ հայրենասիրական իրենց շունչն ու ոգին կը պարտին Հրանդ Գանգրունիի երախտաշատ աշխատանքին:

Հաւատաւոր եւ համեստ ընկեր Հրանդ Գանգրունիի գործունէութիւնը ուղեցոյց է ներշնչման՝ ստանալով գաղափարական ու հայրենասիրութեան ոգի: Անձնագործողութեան աւագան՝ մեր երիտասարդութեան յանուն նոր հերոսական էջերու: Յարգանք իր յիշատակին:

ՇԱԽԱԿՅԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՑԱԽԱԿՅԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԸԱՅԱՍՏԱՆԻ ՇԻՊԱՏՈՍՈՒԹԻՒՆ

Ուրբաթ, Մայիս 5ին, կէսօրէ ետք ժամը 1:30ին Արեւմտեան Ամերիկայի Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Վարիչ Մարմինն ու յարակից կառույցները ներկայացնող պատուիրակութիւն մը այցելեց Լոս Անճելոսի մօտ Հայաստանի աւագ հիւպատոս Պրն. Գազիկ Կիրակոսեանին:

Անոնք «Արմաւիա» օդանաւային արկածի առթիւ իրենց ցաւակցութիւնները յայտնեցին գոհերու ընտանեկան պարագաներուն եւ պատկան մարմիններուն: Այնուհետեւ յատուկ ցաւակցական արձանագրութիւն կատարուեցաւ սոց. մատենին մէջ: Հիւպատոս Պրն. Գազիկ Կիրակոսեան շնորհակալութիւն յայտնեց պատուիրակութեան վշտակցութեան համար:

Ձեր Ծանուցումները վստահեցէք «Մասիս» շաբաթաթերթին

Ընկ. Հրանդ Գանգրունիի տխուր առիթով, "Մասիս"ի խմբագրութիւնն ու իր աշխատակազմը, իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն ողբացեալին ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար իր այրիին, ընկ. Անահիտ Գանգրունիին, գաւակներուն՝ Ընկ. Սեւան Գրըշիկեանին եւ դուստրին, Ընկ. Սիլվային:

**AGBU PASADENA HIGH SCHOOL
REGISTRATION FOR 2006-2007
IN PROGRESS
High School Prep, 9, 10, 11 Grades**

FOR INFORMATION, Please call

818.883.5379
www.agbuphs.org

Ծ ˆ Å Ø ö ² ê ² î Æ Û ² Ú Æ
° ð ĩ ð à ð ² ² ĩ ² Û ì ² ð Ä ² ð ² Û
2006-2007
² ñ 0 ³ ʸ ³ . ñ á ð Æ ç ð ʸ ʸ » ñ Á ĩ Á Բ ³ ñ á ð ʸ ³ ĩ á ð ç ʸ
Û ³ Ë ³ á ³ ĩ ñ ³ ë ĩ ³ ĩ ³ ʸ ʸ , 9, 10, 11
1 ³ ë ³ ñ ³ ʸ ʸ » ñ á ð Ñ ³ Û ³ ñ
Û ³ ò » Ë » ³ Ë ĩ » ð » ĩ á ð Æ ç ð ʸ ʸ » ñ á ð Ñ ³ Û ³ ñ
Ñ » é ³ 0 ³ 0 ʸ » Ë

818.883.5379
www.agbuphs.org

**CLASSES WILL START
September 12, 2006**

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ՍՉժձձՁՁՁՁՁՁՁՁՁՁՁՁՁՁՁՁՁ

Վերջին անգամ Ամերիկայի Միացեալ Նահանգներու գաղթականական քաղաքականութիւնը Գոնկընէն ներս քննարկուած էր շուրջ քսան տարիներ առաջ, նախագահ Ռոնըլտ Ռէյկընի իշխանութեան ժամանակ: Այն ատեն, շուրջ 6 միլիոն «անկանոն» (illegal) գաղթականներու մասին կը խօսուէր: Նախատեսուած լուծումները նոյնն էին, ինչ որ Պուշի ներկայ իշխանութեան օրով կ'առաջարկուէին, այսինքն սահմանային ապահովութիւնը, «անկանոն» գաղթականներու նկատմամբ՝ ընդհանուր ներուծ, (amnesty), եւ պատժամիջոցներ այն գործատէրերուն որոնք գործ կը հայթայթեն ապօրէն կերպով երկրէն ներս գտնուողներուն: Ի՞նչ կը վերաբերի սահմանային ապահովութեան, Մեքսիքայի հետ շուրջ 2000 մղոն սահմաններուն վրայ, արդէն 700 մղոնի չափ պատուար կառուցուած է: Ժամանակին աւելի հեշտ էր գաղթականներու վրայ հսկողութիւն բանեցնելը, քանի որ այս վերջինները «էլլիտ» կղզիէն Ամերիկա կը մտնէին նաւերու միջոցաւ: Հիմա այդ «անկանոն» գաղթականներու թիւը հասած է 12 միլիոնի, ոմանք նոյնիսկ 20 միլիոնի մասին կը խօսին: Հակառակ ուրեմն 700 մղոն պատի, այդ գաղթականները Ամերիկա կը մտնեն ցամաքի միջոցաւ, թեքսասէն, Գալիֆորնիայէն, եւ Արիզոնայէն, եւ «Րիօ Կրանտէ» գետի ափերէն, այսինքն անապատի միջոցաւ, եւ ինչ անապատ: Շատեր կիզի արեւի տակ, ջուրի պակասէն, ծարաւի միջոցաւ կը մեռնին: Ռէյկընի օրով, դարձեալ կը խօսուէր գաղթականներու ելք թրոնային ճշդումներու մասին, որ սակայն անկարելի եղաւ իրագործել, այս միջոցի անիրականալի ըլլալուն պատճառաւ: Այն ատեն ալ, երկրէն ներս գտնուող գաղթականներուն քաղաքացիութիւն շնորհելու մասին խօսուեցաւ, առանց լրջօրէն որոշում առնելու: Մինչ այդ գաղթականներու հոսքը, կամ մուտքը կը շարունակուի նոյն թափով, եւ սակայն գաղթականներու ներկայութիւնը եթէ մինչեւ հիմա լուրջօրէն կ'ըլլար, վերջին քանի մը շաբաթներու ընթացքին, մեծ թափով զգալի դարձաւ Ամերիկայի ամբողջ տարածքին լուրջ ցոյցերու միջոցաւ: Այս ցոյցերու ընթացքին, մէկ մասը բողոքի, եւ մէկ մասն ալ իրենց ներկայութիւնը օրինականացնելու ճիգեր կը թափէին, յատկապէս դէմ արտադրատուութիւն Գոնկընէն ներս,

Ներկայացուցիչներու Տունէն ներս իրենց աննպաստ որոշում առնուած ըլլալուն համար:

Ի՞ՆՉ Կ'ԸՆԵՆ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ

Ընդհանուր տրամադրութիւնը գաղթականներու նկատմամբ այն է, բանաձեւուած նոյնինքն Պուշի միջոցաւ, որ այս գաղթականները, իբրեւ զբաղում, գործ, կ'ընեն այն գործերը որ «ամերիկացիները չեն ըներ», այսինքն կ'աշխատին «աղտոտ» զբաղումներով: Այս առ հասարակ կը վերաբերի շինարարութեան, ճաշարաններու, պանդոկներու, պարտիզամ շակութեան, եւ հողագործութեան, եւ նման աշխատանքի, որ իբրեւ թէ ամերիկացիները չեն ուզեր ընել: Անշուշտ այս գործերու համար գաղթականները նուազ կը վճարուին, եւ աւելի կարեւոր, իրենց շահածին վրայ ընդհանրապէս տուրք չեն տար, եւ կարեւոր գումարներ կ'ուղարկեն իրենց ազգականներուն, Մեքսիքա, կամ Լատին Ամերիկայի տարբեր երկիրներ: Հարցը հոն է որ այս գաղթականները լուրջ բեռ կը հանդիսանան երկրի կրթական, առողջապահական եւ այլ մարզերէն ներս, նոյնիսկ վտանգելով իրենց գտնուած նահանգներու պիւտճէները: Աւելին կայ դեռ: Անշուշտ կ'ամուսնանան եւ գաւակ կ'ունենան որոնք ինքնաբերաբար ամերիկեան քաղաքացիութիւն կը ստանան, պարզապէս հոս ծնած ըլլալուն համար: Ամերիկան ճանչցուած է իբրեւ «գաղթականական երկիր», եւ վիճակագրութիւնները ցոյց կու տան որ աշխարհի գաղթականներու կէսը Ամերիկա մուտք կը գործեն: Մէկ կողմէ, այս երեւոյթը Ամերիկայի յաջողութեան բարձր ցուցանիշ մը կը կազմէ, միւս կողմէ սակայն, հասկնալիօրէն, ձախողութիւն կը նկատուի, քանի որ ապօրէն կերպով Ամերիկա գտնուելուն համար, լուրջ հարց կը մնայ անոնց ներկայութեան հարցը: Ամերիկեան կառավարութիւնը, յատկապէս Գոնկընէն ներս, անկարողութեան մէջ կը գտնուի գաղթականներու վերաբերեալ ընդունելի բանաձեւեր որդեգրելու, պարզապէս բոլորին կողմէ ընդունելի լուծումներ գտնելու տեսակէտէն: Նախագահ Պուշի իշխանութիւնը քաղաքական նկատումներով մանաւանդ ընտրական հաշիւներով, գաղթականներու նկատմամբ «հիւր բանուորներ» լոգունքին տակ, (guest worker) կը փորձէ «կանոնաւորել» միլիոնաւոր մեքսիքացի եւ այլ երկիրներէն անկա-



նոն աշխատողներու ներկայութիւնը արդարացնել: Կան նաեւ մտածողներ ալ, ինչպէս Գարտինալ Մահոնի, որոնք իբրեւ թէ մարդասիրական նկատումներէ առաջնորդուած, կը յուսան արդարացնել իրենց օգնութիւնը գաղթականներուն: Տակաւին կան ուրիշներ, «minute-man» ճանչուած, որոնք իրենց վրայ կ'առնեն սահմաններու հսկողութեան հարցը, արգիլելու համար ապօրէն ձեւով երկրէն ներս մտնող գաղթականներու մուտքը:

Ի՞ՆՉ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ԿԱՆ

Ամերիկան երկու հանգամանք ունի, մէկը՝ «գաղթականներու ժողովուրդ» ըլլալու հանգամանքը (a nation of immigrants) իսկ միւսը՝ «օրէնքի ժողովուրդ» ըլլալու հանգամանքը: Այս երկու հանգամանքները այսօրուայ պայմաններու տակ, իրարու հակոտնեց իրենց թիւերը կը նկատուին, յատկապէս միջագային ահաբեկչութեան ընդհանուր մթնոլորտէն ներս: Ամերիկան, տակաւին մինչեւ քանի մը տասնամեակներ առաջ, գաղթականները կարողացած էր իր «հալեցնող կաթսային» մէջ իւրացնել, (assimilation) երբ այս վերջինները «կանոնաւոր կերպով» մուտք կը գործէին այս երկրէն ներս: «Անկանոնները» այսքան մեծ թիւ չէին ներկայացներ, կը խօսինք 20 միլիոնի մասին, եւ այսօր Ամերիկայի նման մեծ երկիր մը անճրկած է, եւ լուրջ դժուարութեան կը հանդիպի այսքան մեծ թիւ գաղթականներ «իւրացնելու», «ամերիկացնելու»: Յստակ է որ ամերիկեան կառավարութիւնը, փաստօրէն անկարողութեան առջեւ կը գտնուի, եւ կամ չուզեր իր սահմանները աւելի ապահով դարձնել, իր արդէն իսկ պատերազմներու պատճառաւ տարտղնուած բանակը օգտագործելու սահմաններու վրայ հսկելու համար: Միեւնոյն ատեն դժուար է

2000 մղոն երկարութեամբ անցարգել, պատ հիւսելու, որպէսզի Մեքսիքայէն եւ ուրիշ տեղերէն գաղթականներու հոսքը նուազագոյնի իջնէ: Հետաքրքրականը հոն է որ, միլիոնաւոր աշխատողները, ցոյցի ընթացքին, նոյնիսկ չեն քաշուիր օտար դրօշակները պարզելով ցոյց կատարել: Անդին, դրացի երկրի կառավարութիւնը կը զլանայ լուրջ արգելքներ դնելու իր քաղաքացիներու վրայ, որպէսզի անոնք դադրին ապօրէն կերպով Ամերիկա մտնելու: Տակաւին գոյութիւն ունի գինեալ, մաֆիական նկարագիր ունեցող աւազակախումբեր, որոնք սարսափ ստեղծած են սահմանային ամբողջ շրջաններ, գիւղեր իրենց տիրապետութեան տակ պահելու: Նոյնիսկ կառուցած են գետնուղիներ, ապահով կերպով Ամերիկա մտնելու համար:

Վերադառնալով փնտուտութներու, լուծումներու, Ամերիկան ինքզինք կը գտնէ հետեւեալ հարցերու առջեւ.

1. Սահմաններու ապահովութիւն:
 2. Երկրէն ներս արդէն իսկ գտնուող եւ աշխատող գաղթականներու կեցութիւնը կանոնաւորել, անոնց քաղաքացիութիւն շնորհելով միեւնոյն ատեն:
 3. Երկրէն դուրս հանելով անոնք որոնք, ինչ որ ալ արժէ, տակաւին չեն հաստատուած վերջնական կերպով:
- Այս երեք լուծումներն ալ ներկայիս լուրջ դժուարութեանց կը հանդիպին: Ներքնապէս արդէն իսկ տկարացած, եւ անճրկած պետութիւնը, իր քաղաքագէտներով, բանակով, ապահովութեան ոյժերով, կամաւորներով, գործատէրերով, մէկ խօսքով, իր ամբողջ կարելիութիւններով դեռ երկար պիտի սպասէ գաղթականական հարցին բարուք լուծում մը գտնելու համար:

AAA INSURANCE SERVICES
 1975-2005
30
 ANNIVERSARY
 E-mail: BMaronian@AOL.com

INSURANCE COVERAGE CAN HELP YOU FINANCIALLY

ԵՐՔԵՔ ՈՒՅ ԶԷ ՎԵՐԱՔԵՆԱՆԵՆՈՒ ԶԵՐ ԱԳԱՅՈՎԱԳՐՈՒԿԵՐԻՆՆԵՐԸ

BEDROS, SIAMANTO MARONIAN

818 500-9585 AAA INSURANCE SERVICES 885 E. Broadway, Elmonte, CA 91235
ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"



ՇԱԳՅԱԿԱՆ ՊԱՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԻ 79ՐԴ ՊԱՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎ

Թեմական Պատգամաւորական 79րդ ժողովին արձանագրութիւնը սկսաւ Ուրբաթ, Մայիս 5ի առաւօտեան ժամը 10:00ին, ապա ժողովի Ատենապետ՝ Բրշ. Սթիվըն Սրկ. Ատամգի հրաւերով, Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեան մուտք գործեց Եկեղեցի եւ իր կատարած Բացման Աղօթքէն ետք, Ատենապետին կողմէ յայտարարուեցաւ, որ օրինական մեծամասնութիւն գոյացած ըլլալով, ժողովը օրինաւոր կը նկատուէր:

Սրբազան Հայրը գահակալութեամբ Պատգամաւորներուն ներկայացուց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ յատկապէս Թեմիս Համագումարներուն մասնակցելու համար ժամանած Արժ. Տ. Ասողիկ Քհնյ. Կարապետեանը եւ Արժ. Տ. Տրդատ Քհնյ. Բողոքականը: Ժողովին Դիւանը Սրբազան Հօր Նախագահութեամբ կը բաղկանար հետեւեալներէ.՝

Բրշ. Սթիվըն Սրկ. Ատամգ՝ Ատենապետ, Բրշ. Ռատ Սրկ. Ճորճորեան՝ Փոխ Ատենապետ, Տիար Ֆրէնք Գորգմագեան՝ Ատենադպիր Անվերէնի եւ Արժ. Տ. Սիփան Աւագ Քհնյ. Միսեան՝ Ատենադպիր Հայերէնի:

Ատենապետ Բրշ. Սթիվըն Սրկ. Ատամգ իր բարի գալստեան խօսքէն ետք, հրաւիրեց հիւրընկալ Եկեղեցիէն Դոկտ. Վահրամ Պիրիճիքը, որ ժողովի Պատրաստութեան Յանձնախումբի անունով ի սրտէ ողջունեց բոլոր Պատգամաւորներուն ներկայութիւնը Գոսթա Մեսայի Սուրբ Աստուածածին Հայց. Եկեղեցիէն ներս եւ յաջողութիւն մաղթեց ժողովին:

Օրակարգի որդեգրումէն եւ յանձնախումբներու նշանակումէն ետք, Պատգամաւորները վաւերացուցին նախորդ տարուան՝ 78րդ Թեմական Պատգամաւորական ժողովին Ատենագրութիւնը:

Ապա Պատգամաւորները հանգամանօրէն նկատի առին տեղեկագիրները, որոնք արդէն իսկ տպուած էին ժողովի գրքոյկին մէջ:

ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ

Ճաշէն ետք տեղի ունեցաւ Համագումարի Երկրորդ Նիստը:

Սրբազան Հօր կողմէ կատարուած բացման աղօթքէն յետոյ շարունակուեցաւ օրակարգի քննարկումը ինչպէս. բանտերու եւ Հիւանդանոցներու Այցելութիւններ եւ այլն:

Հիւրաբար Թեմս այցելող Արժ. Տ. Ասողիկ Քհնյ. Կարապետեան վեհափառ Հայրապետին Օրհնութիւնները փոխանցելէ ետք, կարդաց Նորին Սրբութեան ղրկած պատգամը՝ յաջողութեան իր բարեմաղթութիւնները յայտնելով Համագումարին:

and the banking system have to play a more prominent role in supporting private sector growth and channeling resources to their best possible use. In addition, the proper functioning of key economic institutions and effective anti-corruption polices can support growth by lowering transaction costs and increasing rates of return on investment." Dr. Gelbard ended on an optimistic note, maintaining that liberal economic policies and the steady privatization process were ultimately helping to reduce poverty in the country.

Announcement

With the growing need of engagement towards the Armenian youth, the Gaidz Youth Organization has founded a new chapter in Glendale.

Meetings are held on a weekly basis.

For more information please call 818- 242-5064

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ ապա առաքեցէք հետեւեալ հասցեով
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

ԱՊՐԻԼ 24-Ի ԱՌԹԻ ԼՍԵՆՔ ՄԵՐ ՄԵՌԵԼՆԵՐԸ

«Աբէլ... թէեւ մեռաւ, բայց տակաւին կը խօսի» (Եբր. ԺԱ. 4)

Ե.Ս.

- Թէեւ մեռաւ, բայց տակաւին կը խօսի:

Առեղծուածային եւ ըստ բնութեան օրէնքին հակասական թուող այս խօսքը վերագրուած է Աբէլի՝ մարդկային առաջին զոհին, որ սպանուեցաւ իր իսկ եղբոր՝ Կայնի կողմէ:

Աբէլի մասին այս վկայութիւնը տուող Եբրայեցոց թուղթին անծանօթ հեղինակն է (թէեւ մինչեւ Բ. դար ընդունուած էր որ Պօղոս էր անոր հեղինակը): Ով որ ալ էր հեղինակը այս խօսքին, անշուշտ թէ ան, իբր Աստուծոյ ճշմարիտ Պօսքը գրող մը՝ հաւատացեալ մէկն էր, իրաւ քրիստոնեայ մը: Թերեւս ճիշդ ասոր համար է որ ան կը լսէ անմեղ զոհի մը ձայնը, ինչպէս նաեւ կը թուէ իր ազգին կարգ մը ծանօթ առաջնորդները եւ բազմաթիւ անծանօթ նահատակները որոնք մեծ քաջագործութիւններ ըրած եւ սպանուած էին իրենց հաւատքին համար (Եբր. ԺԱ. 32-39): Անհաւանական է որ Եբրայեցոց թուղթին հեղինակը լսէր մեռած Աբէլին ձայնը եթէ ան Աստուծոյ սէրը, հոգին, պատգամը եւ պատուէրը չունենար իր սրտին մէջ: Անհաւատները հաւանաբար կրնան մոռնալ մօտ կամ հեռու անցեալին պատկանող հաւատացեալ անմեղ զոհերը, բայց ոչ հաւատացեալները: Հիթլէր հրաման տուաւ յարձակելու Լեհաստանի վրայ եւ հրկիզելու հրեաները, որովհետեւ ան կը հաւատար որ մօտաւորապէս 30 տարի առաջ թրքական ցեղասպանութեան զոհ եղած 1.5 միլիոն

հայերը ոչ ոք կը յիշէր այլեւս: Ան մասամբ շիտակ էր: Մեծ պետութիւններու շահերը կը պահանջէին որ Հայոց Յեղասպանութիւնը մոռցուէր: Ինչպէս այն ատեն, անոնք այսօր ալ կ'ուզեն որ ոչ միայն իրենք, այլ նաեւ հայերն ալ մոռնան իրենց 1.5 միլիոն նահատակները:

Սակայն ինչո՞ւ մեղադրել օտարները երբ մենք՝ մեծաթիւ հայերս չենք ուզեր, մանաւանդ իրարու յաջորդող ներ սերունդները չեն ուզեր յիշել մեր նահատակները եւ լսել անոնց ձայները: Իրենց հայութենէն պարտուած եւ ուժացած հայերուն պատճառած ցաւը շատ աւելի մեծ է եւ աղիտաբեր քան 1.5 միլիոն զոհերուն պատճառած ցաւը, որովհետեւ այս պարագային թէ՛ մեռնողը իրենք են եւ թէ՛ մեռցնողը: Եւ ինչ որ աւելի ցաւալի է, երբ մեր նախնիքները զոհուեցան իրենց ազգային ինքնութեան եւ հաւատքի պահպանման ազնիւ ու վսեմ նպատակներուն համար, նոր սերունդը կը զոհուի - ինքզինք կը զոհէ - աշխարհիկ, նիւթական, լաւագոյն պարագային՝ երկրորդական նպատակներու համար:

Ամէն պարագայի, եթէ քրիստոնեաները չյիշեն ո՞վ պիտի յիշէ: Անհաւատները... եթէ հայ քրիստոնեան չյիշէ իր անցեալի նահատակները ո՞վ պիտի յիշէ զանոնք: Քրիստոնեաները, ոեւէ մարդերէ աւելի, կոչուած են ըլլալու յիշող մարդեր: Առաքեալները յաճախ կը յիշեցնէին եկեղեցիներուն եւ հաւատացեալներուն Աստուծոյ օրէնքը, գործերը, Յիսուսի խաչելութիւնը եւ յարութիւնը որոնք պատահած

էին անցեալին, եւ հիմա իրենց պարտականութիւնն էր զանոնք արծարծել եւ փոխանցել գալիք սերունդներուն որպէս անժամանցելի պատգամ:

Ոմանք հարց կու տան. բայց ինչո՞ւ յիշել 91 տարի առաջ պատահած դէպք մը որ միայն ցաւ կը պատճառէ եւ անհանգիստ կ'ընէ մեզ: Եւ յետոյ, չէ՞ որ վրէժի եւ ատելութեան զգացումներ կ'արթնցնէ ոմանց մէջ...

Այս խորհուրդը պարզապէս պատասխանատուութենէն փախուտ տալու տկար փորձ մըն է, դեռ չըսելու համար ապերախտութեան նշան: Զգարմանանք որ, ինչ որ ունինք եւ կը վայելենք այսօր, եկած են մեզի անցեալէն, ուրիշներէն՝ ի գին մեծ զոհողութիւններու, ինչպէս որ այս երկրին մէջ մեր վայելած բոլոր բարիքներն ու դիւրութիւնները: Հաւատացեալները զոնէ յիշելու են թէ Աստուծոյ խօսքը եկած է մեզի հեռաւոր անցեալէն, սկսելով Քրիստոսէ առաջ մօտաւորապէս 1500 թուականէն: Յիսուս ապրած, խաչուած եւ յարութիւն առած է մօտաւորապէս 2000 տարի առաջ: Այս բոլորը կը պատկանին հեռաւոր անցեալին եւ սակայն մենք զանոնք յաճախ կը յիշենք եւ չենք ըսեր թէ ի՞նչ պէտք կայ զանոնք նորէն յիշելու: Եթէ անցեալը յիշելը սխալ է, պէտք է մոռնալ նաեւ անցեալ տարին, ամիսը եւ երէկուայ օրը...

Եբրայեցոց թուղթը գրուած է Ք.Ն. մօտաւորապէս 65 թուականին, սակայն անոր հեղինակը տակաւին կը յիշէ ու կը լսէ, թերեւս տասնեակ հազարաւոր տարիներ առաջ պատահած ոճիւրի մը մէկ (եւ ոչ թէ... 1.5 միլիոն) անմեղ զոհին ձայնը. «Աբէլ, թէեւ մեռաւ, բայց տակաւին (միլիոնաւոր տարիներ ետք) կը խօսի»: Մեր 1.5 միլիոն անմեղ

նահատակները, որոնք մեռան միայն 91 տարի առաջ, տակաւին կը խօսին եւ պիտի խօսին մինչեւ որ անոնց ձայնը եւ պատգամը լսուի եւ անոնց համար հատուցուծ ու արդարութիւն ըլլայ: Ով որ ականջ ունի կը լսէ: Անշուշտ լսելու ականջ: Ան որ արդարամիտ է անպայման լսելու ականջ կ'ունենայ: Գոնէ ճշմարիտ քրիստոնեաները ունենալու են:

Բայց ի՞նչ կը խօսին մեր 1.5 միլիոն զոհերը որ լսելու ենք:

Առաջին, անոնք կ'ըսեն թէ որեւէ մարդասպանութիւն եղբայրասպանութիւն է: Ոեւէ մարդ երբ կը սպաննէ ուրիշ մարդ մը, հոգ չէ թէ ան կամ անոնք ինչ ազգի պատկանին, եղածը քրիստոնէական հասկացողութեամբ՝ պարզապէս եղբայրասպանութիւն է, որովհետեւ անոնց բոլորին ալ Ստեղծիչը եւ Հայրը Աստուած է, իսկ նախահայրն ու նախամայրը՝ Ադամ եւ Եւա: Պօղոս առաքեալ կ'ըսէ յոյներուն. «Աստուած որ աշխարհը ստեղծեց - բոլոր մարդոց ազգերը մէկ արիւնէ ըրաւ» (Գործք Առ. ԺԷ. 26): Աստուած ստեղծեց բոլոր ազգերը եւ նոյն արիւնէ ստեղծեց զանոնք. հետեւաբար, բոլոր ազգերու զաւակներն ալ իրարու եղբայր եւ քոյր են: Մարդոց մորթերու գոյնը կրնայ տարբերիլ, բայց հիմնապէս անոնք նոյնն են: Արիւնը արիւն է եւ հոմանիշ է կեանքի, ըստ Աստուծոյ խօսքին: Երբ մէկու մը արիւնը թափենք, երբ մարդ մը կը մեռցնենք, եղբայր մը մեռցուցած կ'ըլլանք: Երբ հրեան արաբ մը կը մեռցնէ կամ թուրքը կը մեռցնէ հայը եւ հակադարձաբար, եղածը եղբայրասպանութիւն է: Եթէ միայն այս հասկացողութեամբ մօտենանք կեանքին, հաւանաբար ոճիւրներն ու

p3 n.A չԳ 19



WAHIB'S MIDDLE EAST RESTAURANT
"Where the East Meets the West"

MEDITERRANEAN - LEBANESE FOOD

BANQUET HALL

CATERING FOR ALL OCCASIONS

FAMILY ENTERTAINMENT

EVERY FRIDAY & SATURDAY NIGHT INTERNATIONAL & ARABIC SHOW

CALL FOR RESERVATIONS
TEL 626-281-1006 626-587-1048
FAX 626-281-3641

910 E. MAIN ALHAMBRA, CA





NAZO, VARTAN, AMIR & SINGER MUHAMMAD



BELLY DANCING

ՊՐԵՍԹ-ԼԻԹՈՎԱԿԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԼԵՈՆ ԹՐՈՑԿԻՆ ԵՒ ՅԱՅԿԱԿԱՆ ՅԱՐՑԸ

**ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԳՍԵԱՆ
(Շարունակուած նախորդ թիւէն)**

ԹՐՈՑԿԻ ԵՒ ԹԱՆԱԹ ՓԱՇԱ

Պրեսթ-Լիթովակում թրոցկին միաժամանակ առանձին բանակցութիւններ է վարում ինչպէս Ֆոն Կիլմանի, այնպէս էլ թալաւաթ փաշայի հետ: Արդէն ասուեց, որ այդ հանդիպումը նախապարաստուել է իոֆֆէի եւ Հաքքըր փաշայի նախնական բանակցութիւններում: Թրոցկու հետ հանդիպելու համար յատուկ զննարկ կոստանդնուպոլիսի ժամանեց մեծ վեզիր թալաւաթ փաշան: Ե՞րբ է դա տեղի ունեցել: 1918 թ. Յունուարի 8ին Աւստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարար Չեռնինը իր օրագրում գրել է. «Գիշերը ժամանեց թուրքական մեծ վեզիր թալաւաթ փաշան: Նա հենց նոր եղաւ ինձ մօտ... Թալաւաթ փաշան ամենաօտուտուած եւ, թերեւս ամենաեռանդուն թուրքական գործիչն է» «*Անճարակ*» № 3 1918 թ. 10 հոկտեմբերի 28-ը (Փետրուարի 10) ընկած ժամանակաշրջանում թուրքերը «օսմանեան պատուիրակութեան անունից թրոցկուն են յանձնուած... աւելի լիակատար դաշնագրութիւն...», որտեղ էլ, ըստ երեւոյթի, մտցուել է կարսի, Արտասանի եւ Պաթումի վերաբերեալ պահանջը: Բայց այդ ժամանակ էլ գերմանացիները թուրքական այդ պահանջը հաշուի չէին առնում:

Հարց է ծագում, թէ Գերմանիան արեւմտեան ռազմաճակատից չորս զորաբաժին նետեց Արեւելեան ռազմաճակատ եւ փետրուարի 18ին վերսկսեց յարձակումը: 14 օրուայ ընթացքում նրանք զրաւեցին Մերձպարթիական, Պելոպոնեսի մի շարք շրջաններ, մօտեցան Փեթրոկրատին: Մայրաքաղաքը տեղափոխուեց Մոսկուա:



Թալաւաթ Փաշա

Կուսակցութեան Կենտկոմի փետրուարի 18ի երեկոյան նիստում Լենինը պահանջում է անյամալ ստորագրել հաշտութեան պայմանագիրը: Այդ առաջարկութիւնն անցնում է եօթ ձայնով՝ ընդդէմ հինգի: Հետագային է տրուում Պերլին: Գերմանացիների պատասխանն ստացուում է փետրուարի 23ին, նոր վերջնագրի պայմաններն աւելի դատարան էին: Կենտկոմի հերթական նիստում հաշտութիւնն ստորագրող խորհրդային պատուիրակութեան ղեկավար է նշանակուում Գ.Ե. Սոքոլեւիկովը:

Սոքոլեւիկովի պատուիրակութիւնը Սոքոլեւիկովի գլխավորութեամբ Պրեսթ-Լիթովակ ժամանեց բանակցութիւնների երրորդ փուլը վարելու եւ հաշտութիւն կնքելու համար: Ըստ գերմանական վերջնագրի պայմանների, հաշտութեան բանակցութիւնները վարելու եւ աւարտելու համար նա ունէր ընդամենը յոգնակութիւն է ձեռք բերում իր կորսուած հայրենիքի նկատմամբ: Նախորդ գիշերները չէին բաւարարում թալաւաթին: Նա պահանջեց նաեւ Արեւելեան Հայաստանի շրջանները՝ Կարսը, Արտասանը, վրացական Պաթում նաւահանգիստը, գործողութիւնների ազատութիւն Անդրկովկասում: Հետագային է, որ թալաւաթը, իոֆֆէի վկայութեամբ, յաճախ էր թրոցկուն յիշեցնում, որ ինքը «նոյնպէս յեղափոխական է»:

Ինչի՞ շուրջ էին այդ բանակցութիւնները: Թրոցկու իսկ ելոյթից երեւում է, որ «հայկական հարցը խոչորագոյն դեր էր խաղում թուրքական պատուիրակութեան հետ բանակցութիւններում» եւ որ այդ հարցը «նոր չի բանակցութիւնների տուեալ փուլում» «*Անճարակ*» № 3 1918 թ. 10 հոկտեմբերի 28-ը (Փետրուարի 10) ընկած ժամանակաշրջանում թուրքերը «օսմանեան պատուիրակութեան անունից թրոցկուն են յանձնուած... աւելի լիակատար դաշնագրութիւն...», որտեղ էլ, ըստ երեւոյթի, մտցուել է կարսի, Արտասանի եւ Պաթումի վերաբերեալ պահանջը: Բայց այդ ժամանակ էլ գերմանացիները թուրքական այդ պահանջը հաշուի չէին առնում:

Իսկ ո՞րն է գլխավոր հարցը: Գժուար է գուշակել, որ վճարորդը թուրք-հնդկական յարաբերութիւնների հարցն էր, թէեւ այդ մասին, պարզ է, ոչ մի խօսք չկայ պաշտօնական փաստաթղթերում: Լոնտոնում դաշնակիցները որոշել էին, Ա.Մ.Ն.ի նախագահ Ուիլսոնի բառերով ասած, «Պաղեստինում դնել հրեական պետութեան հիմքը»: Այժմ անհրաժեշտ էր, որ թուրքիան փոխանցէր այդ շրջանի նկատմամբ գերիշխանութիւնը: Պատերազմը դեռ ընթանում էր, նրա էլքը դժուար էր գուշակել: Թուրքիայի համաձայնութեան դէպքում յաղթանակն ապահովուած կը լինէր բոլոր դէպքերում:

Բանակցութիւնները դժուարին էին: Եւ դա հասկանալի է: Աշխարհի ժողովրդադրեան պատմութիւնը չգիտէր մէկ ուրիշ նման դէպք, երբ մի ժողովուրդը, օտարութեան մէջ ապրելով երկու հազար տարի, դարձեալ ինքնիշխանութիւն է ձեռք բերում իր կորսուած հայրենիքի նկատմամբ: Նախորդ գիշերները չէին բաւարարում թալաւաթին: Նա պահանջեց նաեւ Արեւելեան Հայաստանի շրջանները՝ Կարսը, Արտասանը, վրացական Պաթում նաւահանգիստը, գործողութիւնների ազատութիւն Անդրկովկասում: Հետագային է, որ թալաւաթը, իոֆֆէի վկայութեամբ, յաճախ էր թրոցկուն յիշեցնում, որ ինքը «նոյնպէս յեղափոխական է»:

Գերմանացիները ձգտում էին գլխավորին՝ Ռուսաստանի հետ հաշտութեանը, եւ հաշուի չէին առնում թուրքիայի շահերը: Միայն այն բանից յետոյ, երբ թրոցկին ու թալաւաթը համաձայնեցին բոլորը հարցերը, մշակեցին գրաւուած տարածքներից ռուսական զորքերի հեռանալու եւ կարսը, Արտասանն ու Պաթումը թուրքերին յանձնելու մեքենականութիւն, գործառքը կայացաւ:

ՍՈՔՈԼԵՒԿՈՎ-ՌՈՉԵՆՊԵՐՈՎ-ՅԱՔԵՐ ՓԱՇԱ

Խորհրդային պատուիրակութիւնը Սոքոլեւիկովի գլխավորութեամբ Պրեսթ-Լիթովակ ժամանեց բանակցութիւնների երրորդ փուլը վարելու եւ հաշտութիւն կնքելու համար: Ըստ գերմանական վերջնագրի պայմանների, հաշտութեան բանակցութիւնները վարելու եւ աւարտելու համար նա ունէր ընդամենը յոգնակութիւն է ձեռք բերում իր կորսուած հայրենիքի նկատմամբ: Նախորդ գիշերները չէին բաւարարում թալաւաթին: Նա պահանջեց նաեւ Արեւելեան Հայաստանի շրջանները՝ Կարսը, Արտասանը, վրացական Պաթում նաւահանգիստը, գործողութիւնների ազատութիւն Անդրկովկասում: Հետագային է, որ թալաւաթը, իոֆֆէի վկայութեամբ, յաճախ էր թրոցկուն յիշեցնում, որ ինքը «նոյնպէս յեղափոխական է»:



Գերմանացի զինուորականները կը դիմաւորեն Թրոցկին Պրեսթ Լիթովակի վայրից մէջ

մէջը երեք օր:

Մարտի 1ի լիակատար նիստում նախագահող ղեկավարող Ռոզենպլըրը կարողում է գերմանացիների՝ Փետրուարի 21ի վերջնագրի 10 պայմանները: Հասնելով 5րդ կէտին, նա պարզաբանում է, որ այդ կէտին, որտեղ ասուած է «Արեւելեան Անատոլիայի նահանգներից գորքերը դուրս բերելու մասին», կցում է հետեւեալ յաւելումը. ներառելով Արտասանի, Կարսի եւ Պաթումի մարզերը: Սակայն, շարունակում է Ռոզենպլըրը, մենք այդ բանը չենք պնդում՝ խուսափելու համար կցելու ձգտումների մէջ մեղադրուելուց» «*Անճարակ*» № 3 1918 թ. 10 հոկտեմբերի 28-ը (Փետրուարի 10) ընկած ժամանակաշրջանում թուրքերը «օսմանեան պատուիրակութեան անունից թրոցկուն են յանձնուած... աւելի լիակատար դաշնագրութիւն...», որտեղ էլ, ըստ երեւոյթի, մտցուել է կարսի, Արտասանի եւ Պաթումի վերաբերեալ պահանջը: Բայց այդ ժամանակ էլ գերմանացիները թուրքական այդ պահանջը հաշուի չէին առնում:

Հարց է ծագում, թէ Գերմանիան ե՞րբ է իր վերջնագրի մէջ մտցրել թուրքական այդ պահանջները: Այդ կէտը մտցուել է գերմանացիների 1918 թ. Փետրուարի 21ի վերջնագրի մէջ, որ փետրուարի 22ին Ուցիանիիում յանձնուել է խորհրդային ներկայացուցչին եւ փետրուարի 28ի առաւօտեան հասցուել ֆեթրոկրատ:

Սակայն, շարունակում է Ռոզենպլըրը, մենք այդ բանը չենք պնդում՝ խուսափելու համար կցելու ձգտումների մէջ մեղադրուելուց» «*Անճարակ*» № 3 1918 թ. 10 հոկտեմբերի 28-ը (Փետրուարի 10) ընկած ժամանակաշրջանում թուրքերը «օսմանեան պատուիրակութեան անունից թրոցկուն են յանձնուած... աւելի լիակատար դաշնագրութիւն...», որտեղ էլ, ըստ երեւոյթի, մտցուել է կարսի, Արտասանի եւ Պաթումի վերաբերեալ պահանջը: Բայց այդ ժամանակ էլ գերմանացիները թուրքական այդ պահանջը հաշուի չէին առնում:

Հարց է ծագում, թէ Գերմանիան ե՞րբ է իր վերջնագրի մէջ մտցրել թուրքական այդ պահանջները: Այդ կէտը մտցուել է գերմանացիների 1918 թ. Փետրուարի 21ի վերջնագրի մէջ, որ փետրուարի 22ին Ուցիանիիում յանձնուել է խորհրդային ներկայացուցչին եւ փետրուարի 28ի առաւօտեան հասցուել ֆեթրոկրատ:

Այսպիսով, ստացուում է, որ միայն 1918 թ. Մարտի 1ին գերմանացիներն առաջին անգամ սկսեցին խօսել Արեւելեան Անատոլիայի գաւառներից, ներառելով Կարսի, Արտասանի եւ Պաթումի մարզերից գորքերը դուրս բերելու մասին, միաժամանակ միանգամայն աներկամիտ հասկանալ տալով, որ դա «իրենք չեն պնդում»: Վերջապէս հասկանալի է դառնում, թէ ինչու թրոցկին ղեկուս գիտադարի առաջին օրերին եւ նոյնիսկ մինչեւ հաշտութեան բանակցութիւններն սկսելը ձգտում էր հասնել այն բանին, որ ռուսական զորքերը սկսեն դուրս բերուել Անդրկովկասի շրջաններից:

Վերադառնանք, սակայն, Սոքոլեւիկովի գործունեութեանը: Ինչպէ՞ս նա արձանագրեց Ռոզենպլըրի եւ Հաքքըր փաշայի դիրքորոշումներին: Թուում է, թէ խորհրդային պատուիրակութեան ղեմ, առաւել եւս, որ գերմանացիներն այդ դէպքում յայտարարում են, որ իրենք «այդ բանը չեն պնդում խուսափելու համար կցման ձգտումների մէջ» պոլշեիկների կողմի «մեղադրուելուց»: Բայց այդ բանը չպատահեց: Գ.Ե. Սոքոլեւիկովը, որքան էլ դատարարական թուրք առաջին հայտարարութիւնները իրենց նախագ-

ՊՐԵՍԹ-ԼԻԹՈՎՍԿԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԼԷՈՆ ԹՐՈՑԿԻՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Շարունակուած էջ 14-էն

եացքից՝ ոչ մի դիտողութիւն չարեց եւ միայն ցանկութիւն յայտնեց «աշխատանքն աւարտել ամենակարճ ժամկետով» ՝ YááY i » 0Á« ՇՀ 221»

Խորհրդային պատուիրակութեան ղեկավարի նման վարքագիծը յարուցեց գերմանացիների զարմանքը: Իր յուշերում գորավար Հոֆմանը գրում է. «Այս անգամ բանակցութիւններն անցնում էին շատ իւրօրինակ ձեւով: Հենց առաջին նիստում Ռոպենպրոկի առաջարկեց ըստ կէտերի քննութեան առն ել իր բերած հաշտութեան պայմանագիրը: Իսկ Սոքոլնիկովը խնդրեց, որ իր համար անմիջապէս կարդան ամբողջ պայմանագիրը: Պայմանագրի ընթացումից յետոյ Սոքոլնիկովը յայտարարեց, որ ինքը հրաժարուած է իւրաքանչիւր կէտն առանձին քննարկելուց եւ որ ուսանելը պատրաստ են անմիջապէս ստորագրելու ամբողջ պայմանագիրը» ՝ 0° 0áY-Ú³ Y« Yáá0³ Í³ BE³ i° á0ÁÇ0YÁ« ՇՀ 131»

Միայն բանակցութիւնների երրորդ օրը՝ Մարտի 3ին, այիսնքն, հաշտութեան պայմանագիրն ստորագրելու օրը, Սոքոլնիկովը խօսք է վերցնում յայտարարութեան համար: Այն ամբողջութեամբ Թրոցկուտ ընդմիջ էր: Նա ասում է. «Կովկասում, բացառյալստից խախտելով հենց գերմանական կառավարութեան կողմից ձեւակերպուած վերջնագրի պայմանները եւ հաշուի չառնելով Արտահանի, Կարսի, Պաթումի մարզերի բնակչութեան իսկական ցանկութիւնը, Գերմանիան այդ մարզերը բռնի կերպով անջատում է յօգուտ Թուրքիայի» ՝ i° áñ»éÁÉÇÁáí éÍ Ç 0³ BÍ á0Á«³ Y °³ Y³ í° á0ÁÇ0YÁ« 0ÁŞ« ՇՀ 230»

Ի պատասխան դրա, լիազուամար նիստի նախագահ, աստրոհունգարական պատուիրակութեան ղեկավար դոկտ. Հերցը նկատում է, որ տրամադրուած երեքօրեայ ժամկէտը լիովին բաւական էր «պայմանագրի կէտերը համակողմնափօրէն քննարկելու համար» օ եւ որ ուսական պատուիրակութիւնը հնարաւորութիւն ունէր «այդ կէտերը չնդունել»: Ռուսական պատուիրակութիւնը գերադասեց հրաժարուել այդ կէտերի որեւէ քննարկումից եւ ամբողջութեամբ ընդունել իրենց առաջարկուած պայմանները: Այսպիսով, պատասխանատուութիւնը դրա համար ամբողջութեամբ ընկնում է նրա վրայ ՝ YááY i » 0Á« ՇՀ 234»

Այնուհետեւ ելոյթ է ունենում Հաքքը վաշան: Նա բաւականին բազմաշանակ ասում է. «Եթէ Ռուսաստանն անցեալում մեզ որեւէ վիրաւորանք է հասցրել, ապա մենք գիտենք, որ դա եղել է ոչ այն Ռուսաստանը, որի ներկայացուցչի հետ մենք ներկայումս բանակցութիւններ ենք վարում»:

Պաշտպանելով Կարսի, Արտահանի եւ Պաթումի մարզերին տիրելու Թուրքիայի «իրաւունքը», նա նկատում է, որ «այստեղ չկան ոչ յաղթողներ, ոչ պարտուողներ: Մենք բոլորս յաղթողներ ենք»:

Այսպիսով, Թրոցկու-Թաւաթի ծրագիրը ստացաւ իր վերջնական եւ, այսպէս ասած, նիւթական մարմնակոտորումը՝ այդ երեք մարզերը թուրքիային յանձնելու Սոքոլնիկովի համաձայնութեամբ: Հաշտութեան պայմանագիրը Պրեսթ-Լիթովսկուում ստորագրուեց հենց նոյն օրը՝ 1918 թ. Մարտի 3ին:



Երիտ Թուրքերու ղեկավարութիւնը

Հետագրքերի է, թէ ինչպէս է գնահատուած այդ փաստը ինքը՝ Իոֆֆէն: Նա գրում է. «Պրեսթում պարզուեց, որ գերմանական վերջնագրի պայմաններն աւելի են վատթարացել, որովհետեւ չափն անցած Թուրքական իմբերիալիստները յաւակնութիւն ներկայացրին Արտահանի, Կարսի եւ Պաթումի մարզերի նկատմամբ: Չնայած դրան, Ռուսաստանի պատուիրակութիւնը որոշեց չքննարկել հաշտութեան պայմանները, այլ պայմանագիրն ստորագրել առանց քննարկման, որպէսզի ոչ մի դէպքում չստեղծուի Ռուսաստանի յեղափոխութեան եւ Քաղեան Դաշինքի իմբերիալիստների միջեւ որեւէ համաձայնութեան տպաւորութիւն» ՝ YááY i » 0Á« ՇՀ 268»

Փորձենք վերծանել Իոֆֆէի այս դիւանագիտական ճամարտակութիւնը: Նա ցանկանում էր որեւէ բան թաքցնել, թէ իսկուսիքը մեղադրանքից Մի կողմից, «չափն անցած Թուրքական իմբերիալիստներ», որոնք յաւակնում են Կարսին, Արտահանին եւ Պաթումին, միւս կողմից, «չնայած դրան», այդ ամէնը «առանց քննարկման» տալիս են Թուրքերին, որպէսզի յանկարծ «չստեղծուի» նրանց միջեւ «որեւէ համաձայնութեան տպաւորութիւն»: Հարց է ծագում, թէ ո՞ւմ միջեւ: Արդեօք ո՞չ «Պրեսթի քաղաքականութեան » գործիչների եւ երիտթուրք «յեղափոխականների» միջեւ:

ՊՐԵՍԹ «ՀԱՇՏՈՒԹԻՒՆ» ՅԵՏՈՅ

Եւ այսպէս, Պրեսթի հաշտութեան դաշինքը ստորագրուած է: Մարտի 8ին վաւերացուեց Ռ. Կ. (բ) Կ. 7րդ արտակարգ համագումարում, իսկ Մարտի 14ին՝ խորհուրդների 3րդ համառուսաստանեան արտակարգ համագումարում: Բայց արդեօք այն իսաղաղութիւն բերե՞ց: Ոչ: Այն բերեց պատերազմի շարունակում Արեւելքում եւ Հարաւում, սկիզբ դրեց օտարերկրեայ ուղեւորական ներխուժմանը, ծնեց քաղաքացիական պատերազմ:

Ինչո՞ւ իսաղաղութիւն չեղաւ: Այն չէին ուզում Գերմանիայի հետ պատերազմի շարունակմամբ, Պալֆուրեան Հոնդակարի պայմանների խստիւ կատարմամբ շահագրգռուած հզօր ուժերը: Դեռեւս մինչեւ Պրեսթի հաշտութեան կնքումը, 1918 թ. Մարտի սկզբին, Թրոցկին, իրադրութիւնն աւելի սրելու նպատակով, Մուրմանսկի խորհրդի նախագահ Եուրեւին ցուցում տուեց անվտանգի ներքին հետ համաձայնագիր կնքել նրանց ուղեւորական օգնութիւնն ընդուն-

նելու մասին: Ստանալով նման ցուցում, Եուրեւն հասաւ այն բանին, որ բանուորների ներկայացուցիչների Մուրմանսկի խորհուրդը պատերազմ յայտարարեց գերմանացիներին: Կնքուեց այսպէս կոչուած «բանաւոր համաձայնագիր», ըստ որի Համաձայնական երկրներն իրաւունք ստացան գորքերը ցամաք իջեցնել Մուրմանսկում «գերմանական նաւատորմի» իբր սպասուող «յարձակումից» ծովափը «պաշտպանելու» համար:

Ա.Մ.Ն.ի ծերակոյտի ենթախանձնաժողովին տուած իր հաշուետուութեան մէջ Ռոպինաը պատմել է 1918 թ. Մարտի 3ին, այիսնքն, Ռ. Կ. (բ) Կ. 7րդ համագումարի բացումից մէկ օր առաջ Թրոցկու հետ ունեցած իր հանդիպման մասին, Թրոցկին նրան դիմաւորել է հետեւեալ բառերով. «Արդեօք ցանկանում էք խանգարել Պրեսթի հաշտութեան վաւերացմանը»: «Չկայ մի ուրիշ բան, որ ես այդքան շատ ցանկանայի», - սան էլ Թրոցկին եւ ի պատասխան Ռոպինաի այն դիտողութեանը, թէ Լենինը կողմնակից է հաշտութեան, շարունակել է. «Դուք սխալուած էք, Լենինը հասկանում է, որ գերմանական յարձակման սպառնալիքն այնքան մեծ է, որ եթէ նա կարողանար տնտեսական համագործակցութեան հասնել դաշնակիցների հետ եւ ուղեւորական օգնութիւն ստանար նրանցից, ապա կը հրաժարուէր Պրեսթի հաշտութեան պայմանագրից. անհրաժեշտութեան դէպքում կը յանձնէր Մուրմանսկի ֆլեթթրոկրատը, կը հանաջէր դէպի Եկատեռինպուրկ, ուղեւորական կը ստեղծէր Ռուրալում եւ դաշնակիցների օգնութեամբ կը կուռէր Գերմանիայի դէմ» ՝ ²° áá0µ³ ñ»³ Y« i° áñ»éÁÇ 0³ BÍ á0ÁÇ0YÁŞ« ՇՀ 201»

Նոյն օրը Թրոցկին ընդունում է Լոկրատին եւ նրան յայտնում, որ խորհուրդների առաջիկայ համագումարում, հաւանաբար, պատերազմ կը յայտարարուի կամ կը հրապարակուի այնպիսի հոնդակարգի, որն այդ պատերազմը կը դարձնի անխուսափելի, որ «այդպիսի քաղաքականութեան յաջողութեան համար անհրաժեշտ է դաշնակիցներից գոնէ ստանալ օժանդակութեան երեւութականութիւն»:

Թրոցկին հաւաստիացնում է Լոկրատին, որ բոլոր դէպքերում Ռուսաստանը «փարթիզական պատերազմ կը մղէ» ՝ ²° áá0µ³ ñ»³ Y« i° áñ»éÁÇ 0³ BÍ á0ÁÇ0YÁŞ« ՇՀ 178» 179»

Պալֆուրեան Հոնդակարի հրապարակումից յետոյ հրէական ազգային շարժման լոնտոնեան կենտրոնը, անօրինող ցուցումներ տուեց Ռուսաստանի հրէական գործիչներին աշխատանքի նոր մեթոտների վերա-

բերելը՝ համաձայն Անգլիայի նպատակների եւ խնդիրների): Սխոնիստական կազմակերպութեան կենտրոնական կոմիտէի անդամ Ա. Դ. Խոլտոնի մի գաղտնի գեկուցագրի մէջ, որը խորհրդային մարմինների ձեռքն էր ընկել խուզարկութեան ժամանակ, ուղղակի ասում է, որ սխոնիստները Անգլիայի առաջ պարտաւորութիւն են վերցրել «խորհրդային մարմինների հրեայ աշխատողների միջոցով ձնշում գործարքել յօգուտ պատերազմի շարունակման» ՝ É° 09 0° 9° 0° Ç° Y ° 3 éAYÁ» ñ 0° É° 9° 0° 9° 0° 0° 445° 0° 0° 22° Á° 35»

Ո՞ր աշխատողների միջոցով: Այդ հարցին փաստաթուղթը ազդու կերպով պատասխանում էր. «Հրապարակման ենթակայ չէ»:

1917 թ. Կովկասեան ուղեւորական կատից ուսական գորքերի դուրսբերումով խորհրդային ղեկավարութիւնը Թուրքերին յանձնեց Անդրկովկասի բանակին, իսկ Պրեսթի հաշտութեան կնքմամբ՝ կանաչ լոյս վառեց այդ շրջանում Թուրքերի ներխուժման առաջ: Ու. Չրըչիւը գրում էր, որ Պրեսթ-Լիթովսկի պայմանագիրը «ազդանշան ծառայեց Թուրքական ընդհանուր յարձակման համար Արեւելքում» ՝ i° 0³ - Ú³ BE³ ñ³ Y ° 3 Á³ ÚÁŞ« ՇՀ 278»

Մնում է պարզել, թէ կատարեցի՞ւն արդեօք պայմանաւորող կողմերը Պալֆուրեան Հոնդակարի իրենց պարտաւորութիւնները: Անգլիացիները պնդում են, որ սխոնիստները կատարեցին: «Սխոնիստական առաջնորդները, - ասում էր Լոյտ ծորճը, - իրենց խօսքի տէրը եղան թէ ձեւի եւ թէ իմաստի առումով, եւ հիմա օրակարգում միայն մէկ հարց կայ՝ մտադի՞ր ենք արդեօք մենք ազնուօրէն լինել մեր խօսքի տէրը» ՝ É° áí Üí 0áñ»« Yáá0³ Í³ BE³ i° á0ÁÇ0YÁ« ՇՀ 302»

Սխոնիստների գործունէութեան մասին գովեստով է արտայայտուած նաեւ Ուինսթըն Չրըչիւը: 1921 թ. Յունիսի 22ին գեկուցումով հանդէս գալով կայսերական խորհրդարանում, նա ասաց. «Պատերազմի ժամանակ մենք, անկասկած ձգտում էինք, ամէն ինչից զատ, ազդեցութիւն ձեռք բերել եւ օժանդակութիւն ստանալ մեր գործի համար, մասնաւորապէս, մենք ուղղում էինք ստանալ ամբողջ աշխարհի հրեաների աջակցութիւնը: Մենք դրան հասանք»: Անգլիան յաղթանակից յետոյ հաւատարիմ մնաց իր խոստմանը՝ Պալֆուրեան ստեղծեց հրէական ազգային օժանդակութեան ազգային օժանդակութեանը:

Իսկ Թուրքիա՞ն: Իս նոյնպէս հաւատարիմ մնաց այն խոստմանը, որը Թաւաթ փաշան տուել էր Թրոցկուին 1918 թուականի Յունուարին: Արդիւնքները գերազանց էին: Առաջիններից մէկը դրանք ամփոփեց հրէական ազգային շարժման առաջնորդներից Բ. Կոլտպուրկը: Նա հրապարակեց մի յօդուած, ուր մեծ գոհունակութեամբ էր բերում այն նոյն ձեւով փաշայի խօսքերը, որը դեռ 1917 թուականին առաջինը հրապարակաւ ողջունեց Թրոցկուին՝ ցարական գաղտնի պայմանագրերը հրապարակելու համար: Մի խումբ հրեաների առաջ ունեցած իր ելոյթում ձեւով փաշան յայտարարել էր. «Դուք արդէն ստեղծել էք հրէական պետութիւն Պալֆուրեանում: Դուք ստեղծել էք ձեր լեզուով դպրոցների ցանց, դուք ստեղծել էք գաղութների ցանց, ուր դուք ինքնուրոյնաբար տնօրինում

ՀԱՅՈՒՆ ՊԱՅՔԱՐԸ ՍՈՒՐԵ Է՝ ԵՒ ՅԱԻՏԵՆԱԿԱՆ

Ո՞Վ Է ՀԱՅՐԸ

ՎԱՐՂԱՆ ԱԲ. ՔՅՆՅ. ՏԻԼԿԵՐԵԱՆ

Ժամանակակից մարդիկ կ'ուզեն հակադասություններ, ամենագոր դառնալ, յաղթական երեւալ գեղաճաճանչ գազաթներու վրայ եւ անկէ ցոլացնել ստորոտներու վերեւ՝ իրենց ճառագայթող սնապարծութիւնը:

Սանձարձակ կ'արշաւեն ամէն ուղղութեամբ ու կը միտին ճնշումի տակ պահել լուռ ու խոնարհ գանգուաճները, որ երբեք չ'ազատագրուին իրենց ստրկութեան կապանքներէն:

Բռնատիրութեան պիղծ ձեռքերը չեն, որ պիտի գրեն հայ ժողովուրդին գուլումներուն մարտիրոսագրութիւնը եւ անշունչ թիւերը չեն, որ պիտի վկայեն հայաշինջ ցեղասպանութեան անաւորութիւնը:

Պատմութիւնը կը գրեն մանրակրկիտ ճշմարտութեամբ չարագորարներու գեհնատեսիլ սպանդէն հրաշքով վերապրած բիւրատր նահատակներու գաւազները եւ թոռները, որոնք վաւերական վկայներն են Յեղասպանութեան:

Անոնց ազգային խղճմտանքը չի թողուր, որ եղեռնի արիւնոտ իրողութիւնները խեղաթիւրուին ճշմարտութիւնը սրբապղծող կեղծ պատմագիրներու յերկրածոց փաստարկութիւններով:

Սարդարապատի ճակատագրական բախումներուն, ողջ հայութիւնը միակամ դիմագրաւեց, ոչ միայն իր գոյութեան բնաջնջումին սպառնացող մեծագոյն մարտահրաւէրը, այլ Աստուծոյ հետ գորակցած, յաջողեցաւ պարտադրել թշնամիին, որ ամօթապարտ նանահանջէ, իր թիկունքը ցոյց տալով՝ հայ գրոհող բանակին:

Այս ազատ օրերուն կը ներգզանք այդ մեծահրաշ յաղթութեան ազգային հպարտութիւնը, որ հայ նորագոյն պատմութեան ոսկեգօծ էջերը կը կազմեն:

Անկարելի է խորաչափել հայ մարդուն, հայ կնոջ, հայ երիտասարդին, հայ կղերին բարացուցական գործիւնը տարակուսելի պատերազմի մը դէմ տարած յաղթական հրաշքը:

Հայ ժողովուրդին առհասարակ անմիաբանութիւնը, այդ ճգնաժամային օրերուն, երկնային միջամտութեամբ կանգ առաւ, որ հայութիւնը, անպարտելի բանակի մը դիմաց փրկէ իր ազգային գոյութիւնը իսկական բնաջնջումէ:

Այս դժուար օրերուն կ'ուզենք ու կը փնտրենք այդ երազային Միութիւնը, ազատ ու անկախ հայ աշխարհին մէջ ու չենք գտներ: Սիրտերը տրամադրուած չեն այդպիսի հրաշք մը կատարելու:

Հայուն մտքին, սրտին ու հոգիին մէջ միահեծան կ'իշխէ սատանային ետը: Հայը մեծ վտանգներու դիմաց կը զոհէ իր կեանքը, բայց ոչ իր բազմազգայնանի ԵՍ-ը:

Քրիստոսի սիրոյ յեղափոխութեան միջնակ աշար հայ եկեղեցիներու խնկաբոյր կամարներու տակ կը թնդան Տէր Ողորմիտները, սէր եւ միութիւն աղերսելով Երկնաւորէն, բայց ամպերէն վեր, երկինք չեն հասնիր ու լսուիր:

Ի՞նչպէս Աստուած ունկնդիր ըլլայ մեր աղօթքներուն եւ երգերուն, երբ ատելավառ հոգիներէ կը բխին եւ սիրոյ հրեշտակը չի կրնար խեղդել մեր մէջ մունջող դազանը: Պէտք է երկրորդ Սարդարապատ մը ցնցէ մեր հոգիները, որ համբուրելի համերաշխութիւնը գործէ ամէն հայ

յու մէջ:

Մի կարծէք որ հայ ժողովուրդին անտարբերութիւնը անտարբեր է, իր կողմից ան խաղաղութեան մէջ եւ աւեր ու կորսուտ չի պատճառուէ մեր ազգային շահերուն:

Ներկայիս, թէ անմիաբանութիւնը եւ թէ անտարբերութիւնը սերտօրէն զօրակցած՝ վտանգ կը սպառնան հայրենիքին եւ հայրենաբնակ հայութեան, անոր մտքին մէջ սնուցանելով արտագաղթի հրէշալին գաղափարը:

Հայրենի իշխանութեան եւ ընդդիմադիր հոսանքներու միջեւ հակամարտութեան խրամը կը խորանայ՝ վտանգելով հայրենի տարաբախտ ժողովուրդին տազնապալի կեանքը:

Հայութեան անտարբերութիւնը՝ անմիաբանութեան հաւասար ազգավնաս հիւանդութիւն է, սարելի չէ յաղթահարել զայն մարդկային բարոյական տկարութիւններով:

Լաւակեցող պայմաններու մէջ շնչող՝ ընչաքաղց հայերու ունկնդիր եղած եմ հովուական պաշտօնավարութեան օրերուն...: Անոնցմէ մէկն է խօսողը:

- Ազգային կըքոտ հակամարտութիւններէ ու պայքարներէ կղզիացած ապրած եմ, ընտանեկան շրջանակիս մէջ ապահով ու հանգիստ: Հեռախօսիս թիւը եւ տանս հասցէն չեմ հրապարակած, որ գոյութիւնս չքողագերծեն եւ մուրացկանի խնդրանքներով զիս անհանգիստ չ'ենն: Անունս եւ մականունս փոխեցի, հիմա կը կոչուիմ, ձան Փիթերսըն:

Գիտէի՞ր՝ ո՞ր կը գտնուէր գեղատեսիլ ծառաստանով շրջապատուած իր պերճաշուք ապարանքը, բայց ոչ մէկ օր չ'իտրձեցի մօտենալ, նկատելով իր անբեկանելի ազահութիւնը... չ'մերժուելու համար:

Կը մտածեմ հայաստանի հրավառ զգացումով, թէ նիւթական ի՞նչ կարօտալի ու ողորմելի վիճակի պիտի ենթարկուէին հայ եկեղեցիները եւ դպրոցները, եթէ ասոնց առընթեր արեւներու պէս չճառագայթէին բարեգութ ու բարեխիղճ հոգիներ:

Հայրենասէր հայորդիին համար, իր ազգը, իր հայրենիքը, իր եկեղեցին օտարաբոյր սրբութիւններ չեն, որ ապերախտօրէն անտեսուին ու արհամարհուին: Հայ մը, իր ծնունդով մօրը արգանդէն անիծուած ու վիժած պէտք է ըլլայ, որ հայութիւնը իր կեանքէն ու ծագումէն ջնջէ:

Յաւալին այն է սակայն, որ ապերախտութիւնը, անտարբերութիւնը, անմիաբանութիւնը, նիւթապաշտութեան ու մարմնապաշտութեան իսթանուած կապարացուցած են մեծ թիւով հայերու ազգային խղճմտանքը, որ մարդկային խղճահարութիւնը, այն անյաղթելի գործիւնը չէ որ սառնակոյտերը բեկանէ եւ կապարները հալեցնէ:

Նօսրացած են սակաւթիւ գոհաբերողները, որ հին օրերու բարեւարներու լիաբուռն նուիրաբերումներով դիւցազնանան զոհողութեան պատնէշներու վրայ:

Համաճարակի նման ծաւալած՝ վարակիչ անտարբերութիւն մը կ'իշխէ արտաշխարհի հայ կեանքին վրայ, որ չի յաղթահարուիր սրտառու լուրջերով ու խնդրանքներով: ***

Ժողովրդային իմաստութիւնը

ՆՈՒԱՐԴ ԶԱՐԳԱՐԵԱՆ

Իսկապէս, ո՞վ է հայրը:

Արդեօք բարեկիրթ է հայը, շնորհալի է թէ անշնորհք: Առաջադէմ է, յետադէմ է, աստուածավախ է, թէ անօրէն, աւանդապա՞հ է, ընդօրինակող է, օրէնսդիր եւ օրինապա՞հ է թէ օրինազանց, հայրենասէր է, դաւաճա՞ն է, հանճարե՞ղ է, միջակութիւն է, ճշմարտի՞տ է թէ խաբեբայ, ժամանակակից է թէ ժամանակավրէպ, գիտակից է թէ հակառակը: Գիտո՞ւն է, տգէ՞տ է, հանդուրժող է, շինարար է, թէ քանդող, աշխատասէր է թէ՞ ծոյլ է, ազգային գիտակցութիւն եւ արժանապատուութիւն ունի՞ր թէ օտարամոլ է, արդեօք օր առաջ ուզու մէ «ագատուի» իր ազգային անգին ժառանգութիւնից ու մի գուցէ օտար մշակոյթի «փշրանքներն» են իրենց բաւարարում:

Նման հարցեր հանգիստ չեն թողել ինձ, իմ ամբողջ կեանքում: Ծնունդ եւ պարել եմ օտար երկրում, ստացել եմ կրթութիւնս օտար լեզուով ու ակամայ հետեւել եմ օտար մշակոյթի, դրան գուզնթաց երեւի ծնողներից քաջալերանքով, իմ համեստ ուժերով եւ ոչ լաւ հանգամանքներում, հետեւել եմ նաեւ մեր ազգային արժէքներին:

Եղել է մի ժամանակ իմ կեանքում (նախքան Հայաստանի անկախացումը) որ շատ լաւատես էի վերոյիշեալ մարդկային հակասա-

կ'ըսէ, բարեկամներ բազմապատկեցէք եւ վստահ եղէք, որ անոնց բարեկամութիւնը շահելով, պիտի շահիք անոնց քսակները:

Շարունակական արտագաղթողներու թուիչքներէն մեր որբացած հայրենիքը, չի սիրուիր ու պաշտուիր երբեմնի բարունամեայ ազատամարտիկներու ողջակիզուած սէրերովը:

Ամբոխը գուլթ չունի, հաւատք չունի, կ'ատէ սրբութիւնը, կը հալածէ բարին, ինչպէս խաւարը՝ լոյսը: Կը նախընտրէ սատանային տատասկոտ առահետներէն քալել, քան թէ Աստուծոյ ծաղկաւէտ ճամբաներէն:

Ի՞նչ գովելի արժէք կը մնայ մարդուն էութեան մէջ, երբ անկէ կը բացակայի Աստուծոյ հաւատքը, որ հոգիին գանձերուն գանձն է, երկնային շափանիշով եւ աստուածային գնահատումով:

Մարդը մեծահարուստ է լոկ այդ անփոխարինելի գանձով, քաջաւորը է մարմնով, երջանիկ է կեանքով, յաւիտենական է իր փառքով:

Երբ բանաւոր արարածը կը կողոպտուի իր երկնային շնորհներէն, իր մէջ կը բացուի վիճային պարապութիւն մը, որ յորդելու աստիճան կը լեցուի անէճքի պտուղներով, ինչպէս կ'ըսէ Ոսկեբերան Նարեկացին իր աղօթամատենային մէջ: Մեղքերու եւ մոլութիւններու

կան յատկութիւններէր, միայն դրականներով էի յատկանշում հայ մարդու նկարագիրը: Անկախացումից յետոյ, ժողովրդի արտագաղթը՝ հայրենիքից, ուղղակի հիասթափութիւն բերեց ինձ, աւելի խիստ ածական չտալու համար կարող եմ ասել՝ հայը եղաւ ինձ համար, օտարեւ անհասկանալի:

Երկար ժամանակ տարակուսած էի՝ ո՞վ է հայը իսկապէս.

Այժմ իմ կարծիքով, հայը չի կարող բացառութիւն կազմել ընդհանուր մարդկութիւնից ամէնքի պէս, ունի իր բարեմասնութիւններն ու նաեւ թերութիւնները, բայց լինելով ճենտիքօրէն տաքարուիւն երկու դէպքում էլ միշտ արտակարգ ու ցայտուն վարքագիծն է, որ խանգարում է մեզ սառը դատողութեամբ մօտենալ եւ վերլուծել դժուարութիւնները եւ պայքարել նրանց դէմ սառնասրտութեամբ, կիրառելով համապատասխան եւ խելամիտ լուծում: Սա հայի ամենացաւոտ կողմ է ընդհանուր նկարագրի մէջ: Կայ նաեւ մի ուրիշ հանգամանք՝ այդ այն է որ ցաւօք սրտի երբէք հայը չի կարողացել նկատի առնելով պատմութեան փորձանքները՝ քննարկել ներկայ ժամանակի եւ ինչու չէ նաեւ տեղի պահանջներն, ու հանգամանքները՝ նախ ճիշդ կողմնորոշուել, այնուհանդերձ նախատեսուած քայլ վարժել, ձեռքազատուելու համար ամէն մի ստեղծուած դժուարութիւնից:

Բարեկամներ ետք, ալ սատանան չի ձգեր իր որսը ազատութեան մէջ շնչէ: Ապերջանկութիւնը կ'ըլլայ իր պատուհասը եւ մահապատիժը:

Անանուն ամբոխը կ'անցնի անտարբեր ու սառնարիւն իր առջեւէն, հեզնելով իր ողորմելի ճակատագիրը:

Պէտք է հաւատքը գահակալէ մարդուն մէջ աստեղագարդ եւ շողարձակում տալ իր խաւարակուռ շրջապատին՝ Քրիստոսի շնորհներով:

Փոթորակից օր մը Յուլիոս Կեսար կը գտնուէր փոքր նաւու մը մէջ Ադրիական ծովուն բացերը: Յանկարծ՝ անհաւոր ալեկոծութիւն մը սարսափով համակեց Կայսեր հետեւորդները:

- Մի վախնաք, խրախուսեց Կայսրը, անկարելի է, որ այս նաւը ընկղմի, որքան ատեն իրեն ճամբորդ ունի Կեսարը:

Այս խօսքերը ցոյց կու տան մեծ մարդու մը ինքնավստահութիւնը, որ կը ժխտէ յուսահատութիւնը:

Ուրիշ նաւու մը մէջ կը լսուին նոյն խրախուսական խօսքերը, ոչ թէ մարդու մը բերնէն, այլ երկնային հորիզոններէն:

Այդ նաւը, Հայաստանեայց Ուղղափառ եկեղեցին է, որ ծովամոյժն չի կորսուիր, որքան անհեղ փոթորիկներէն ծեծուի, որոհետեւ նաւապետը Քրիստոսն է:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»

ԸՆՈՒՍԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ

ժԱՄԱՆԱԿԱՅՈՅՑԸ
CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ
 (ՎԼԵՆՏԵՅԼ, ՊՈՐՊԵՆԵ, ԼԱ ՔՐԵՍԵՆՈՍ)
 ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00

ՄԱՍԻՍԻ ԼՍՏԻՎԱԿԱՆ ԵՎ ԿՈՄԱՐՍԻ

ՔՐԵՎ ԵՎ ԿՐԵՎԻՆԻ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ

ԿՐԵՎ	ՔՐԵՎ	ԿՐԵՎ	ՔՐԵՎ
ԿՐԵՎ 1	ՔՐԵՎ 1	ԿՐԵՎ 1	ՔՐԵՎ 1
ԿՐԵՎ 2	ՔՐԵՎ 2	ԿՐԵՎ 2	ՔՐԵՎ 2
ԿՐԵՎ 3	ՔՐԵՎ 3	ԿՐԵՎ 3	ՔՐԵՎ 3
ԿՐԵՎ 4	ՔՐԵՎ 4	ԿՐԵՎ 4	ՔՐԵՎ 4
ԿՐԵՎ 5	ՔՐԵՎ 5	ԿՐԵՎ 5	ՔՐԵՎ 5
ԿՐԵՎ 6	ՔՐԵՎ 6	ԿՐԵՎ 6	ՔՐԵՎ 6
ԿՐԵՎ 7	ՔՐԵՎ 7	ԿՐԵՎ 7	ՔՐԵՎ 7
ԿՐԵՎ 8	ՔՐԵՎ 8	ԿՐԵՎ 8	ՔՐԵՎ 8
ԿՐԵՎ 9	ՔՐԵՎ 9	ԿՐԵՎ 9	ՔՐԵՎ 9
ԿՐԵՎ 10	ՔՐԵՎ 10	ԿՐԵՎ 10	ՔՐԵՎ 10
ԿՐԵՎ 11	ՔՐԵՎ 11	ԿՐԵՎ 11	ՔՐԵՎ 11
ԿՐԵՎ 12	ՔՐԵՎ 12	ԿՐԵՎ 12	ՔՐԵՎ 12
ԿՐԵՎ 13	ՔՐԵՎ 13	ԿՐԵՎ 13	ՔՐԵՎ 13
ԿՐԵՎ 14	ՔՐԵՎ 14	ԿՐԵՎ 14	ՔՐԵՎ 14
ԿՐԵՎ 15	ՔՐԵՎ 15	ԿՐԵՎ 15	ՔՐԵՎ 15
ԿՐԵՎ 16	ՔՐԵՎ 16	ԿՐԵՎ 16	ՔՐԵՎ 16
ԿՐԵՎ 17	ՔՐԵՎ 17	ԿՐԵՎ 17	ՔՐԵՎ 17
ԿՐԵՎ 18	ՔՐԵՎ 18	ԿՐԵՎ 18	ՔՐԵՎ 18
ԿՐԵՎ 19	ՔՐԵՎ 19	ԿՐԵՎ 19	ՔՐԵՎ 19
ԿՐԵՎ 20	ՔՐԵՎ 20	ԿՐԵՎ 20	ՔՐԵՎ 20

ՄԱՍԻՍԻ ԼՍՏԻՎԱԿԱՆ ԵՎ ԿՈՄԱՐՍԻ
ՔՐԵՎ ԵՎ ԿՐԵՎԻՆԻ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ

ՄԱՍԻՍԻ ԼՍՏԻՎԱԿԱՆ ԵՎ ԿՈՄԱՐՍԻ
ՔՐԵՎ ԵՎ ԿՐԵՎԻՆԻ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ

ՄԱՐԱԶԴ

ԺԻՐԱՅՐ ՊԱՂՊՈՒՏԱՐԵԱՆ
(Ծնեալ՝ 1921ին, ԱՏԱՆԱ)

Սրաի դառն կակիծով կը գուժենք մեր սիրելի հօր, եղբոր եւ հարազատին՝ **ԺԻՐԱՅՐ ՊԱՂՊՈՒՏԱՐԵԱՆ**ի մահը, որ պատահեցաւ **Չորեքշաբթի, 10 Մայիս 2006ին, Լիբանանի մէջ**:

Թաղման արարողութիւնը կատարուեցաւ **Հաճնոյ Ս. Գէորգ եկեղեցոյ մէջ**:

- Սգակիրներ՝
- Ձաւակները՝
- Տէր եւ Տիկ. Արմենակ Պաղպուտարեան եւ զաւակները (Ֆրանսա)
- Տէր եւ Տիկ. Մկր Պաղպուտարեան եւ զաւակը (Լիբանան)
- Տէր եւ Տիկ. Վազգէն Պաղպուտարեան եւ զաւակները (Լիբանան)
- Տէր եւ Տիկ. Ճորճիկ եւ Տիգրանուհի Բարսեղեան եւ զաւակները (Լիբանան)

- Քոյրը եւ քեռայրը՝
- Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Արմէնուհի Փաշայեան (Ամերիկայ)
- Քոյրը՝ Ձապէլ Չափութեան եւ զաւակները (Լիբանան)
- Տէր եւ Տիկ. Սիրվարդ Ապիատ եւ զաւակները
- Տէր եւ Տիկ. Տիգրանուհի Հաքիմեան եւ զաւակները
- Տէր եւ Տիկ. Ռաֆֆի Քէրոզեան եւ զաւակները
- Այլի Տիկին Պաղպուտարեան եւ զաւակները
- Տէր եւ Տիկ. Եփրեմ Պաղպուտարեան
- եւ համայն ազգականներ եւ բարեկամներ:

ՅԱԲԱԿՅՈՒԹԻՒՆ

ՁԱԻԷՆ ԲԱԶԻԿԵԱՆի մահուան տխուր առիթով «Քաջ Նազար» ամսագրի եւ հեռուստածրագրի անձնակազմը խորազգաց ցաւակցութիւններ կը յայտնէ հանգուցեալի տիկնոջը՝ **Տիկ. Սօնիկին զաւակներուն եւ համայն ազգականներուն ու հարազատներուն**:

ՅԱԲԱԿՅՈՒԹԻՒՆ

ՁԱԻԷՆ ԲԱԶԻԿԵԱՆի մահուան տխուր առիթով **Տէր եւ Տիկ. Սրբուհի եւ Ներսէս Բայալեաններ** իրենց ցաւակցութիւններ կը յայտնեն հանգուցեալի տիկնոջը՝ **Տիկ. Սօնիկին զաւակներուն եւ համայն ազգականներուն ու հարազատներուն**:

ՅԱԲԱԿՅՈՒԹԻՒՆ

Կլէնտէյլի «Սթար» ֆուլթայլի կազմակերպութեան հիմնադիր եւ անոր ծնողական խորհրդի անդամ, ֆուլթայլի խումբերու հովանաւոր եւ ազգային **ՁԱԻԷՆ ԲԱԶԻԿԵԱՆ**ի մահուան տխուր առիթով **Կլէնտէյլի «Սթար» ֆուլթայլի կազմակերպութիւնը** իր խորազգաց ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի տիկնոջը, զաւակներուն եւ բոլոր հարազատներուն:

ՅԱԲԱԿՅՈՒԹԻՒՆ

ԸՆԿ. ՀՐԱՆԴ ԳԱՆԳՐՈՒՆԻի մահուան առիթը **Տէր եւ Տիկ. Ընկ. Յովիկ Լաչինեան** ցաւակցութիւն կը յայտնեն ընտանեկան պարագաներուն եւ այս առիթը \$100 կը նուրիեն «Մասիս»ին:

ԸՆԿ. ՀՐԱՆԴ ԳԱՆԳՐՈՒՆԻի մահուան առիթը **Տէր եւ Տիկ. Ընկ. Կարօ Պէքարեան** ցաւակցութիւն կը յայտնեն հանգուցեալի հարազատներուն եւ այս ցօ \$50 կը նուրիեն «Մասիս»ին:

ՔԱԶ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ԾՕ

Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 11:00-ից 1:00
Կլէնտէյլի 26-րդ կայանից

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՇՈԳԻՒ ՇԱՄԱՐ) ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՇԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՇԵՆԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680 (626) 398-0506

ՇՆՁԱԿԵԱՆ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԵԱՆ ՇԱՆԴԻՊՈՒՄԸ

ԽՅ ԴՅԾԿՅՅ ԻՃԾՅ ԻՇՇ 1-ՇԿ

ու հայրենիքը եւ յարանուանութիւնները չուզող այժմէական նիւթերու շուրջ: Պատուելի Մաթոսեան յատակորէն ներկայացուց իր Միութեան սկզբունքները միջ-կրօնական եւ յարանուանական հարցերու շուրջ: Ան մասնաւորապէս նշեց որ շուրջ երկու դար առաջ Շուշիի մէջ հիմնուած է Հայ Աւետարանական եկեղեցին, ինչպէս անցեալին, նոյնպէս եւ ներկայիս միշտ եղած է հայութեան կողքին: Իսկ Հայաստանի անկախութենէն ետք՝ կրթական եւ մարդասիրական բազմաթիւ օժանդակութիւններ կատարած է Մայր Հայրենիքէն ներս (մանկամտուրներ, դարմանատուներ, դպրոց եւ եկեղեցի): Հայ Աւետարանական

Միութիւնը իր հայեացքը ուղղած է միշտ հոգեւոր կեդրոն Ս. Էջմիածնին եւ հայրենիքին, ու կարելի բոլոր միջոցներով սատար հանդիսացած է իր ժողովուրդի վերելքին: Պատուելի Ճ. Մաթոսեան ինք եւս դատապարտեց օտարամուտ արանդներու մուտքը Հայաստանէն ներս, որոնց դաւանանքը անյայտ իր է մեր հաւատալիքներուն:

Աւելի քան մէկ ու կէս ժամ տեւող այս հանդիպման աւարտին Ս.Դ.Հ.Կ. Վարիչ Մարմնի ատենապետ՝ **ընկ. Գ. Մոլոյեան** շնորհակալութիւն յայտնեց պատուելի Ճ. Մաթոսեանին ջերմ ընդունելութեան եւ սրտաբաց գրոցիքին համար, մաղթելով յաջողութիւն թէ Միութեան եւ թէ համագաղութային գործունէութիւններու ծիրէն ներս:

ԼՍԵՆՔ ՄԵՐ ՄԵՈՒՆԵՐԸ

ԽՅ ԴՅԾԿՅՅ ԻՃԾՅ ԻՇՇ 13-ՇԿ

պատերազմները շատ քիչ պիտի ըլլային: «Միթէ ես իմ եղբորս պահապանն եմ» հարցումին, քարոզիչ մը իմաստուն պատասխան մը տուած է. «Ոչ, պահապանը չես, եղբայրն ես»: Եղբայր ունեցողը պահապանի պէտք չունի:


Երկրորդ, մարդ մեղքի պատճառով հիմնապէս ապականած է: Երտակ է որ Աստուած ինչ որ ստեղծեց լաւ էր եւ բարի, սակայն Ադամ եւ Եւա նախընտրեցին իրենք ըլլալ տէրը իրենց կեանքին եւ իրենց ուզածին պէս ապրի, ձախողեցան եւ պատճառ եղան իրենց եւ համայն մարդկութեան հիմնապէս ապականութեան, ծնունդ տալով տիեզերական մեղքին եւ չարիքին: Ինչո՞ւ կային մեռցուց Աբէլը, որովհետեւ հիմնապէս չար էր: Մեղաւոր էր: Չարութիւն գործեց որովհետեւ չար էր: Մարդ այն է եւ կ'ընէ ինչ որ է: Ան մեղաւոր է, հետեւաբար մեղք կը գործէ: Աստուծոյ խօսքը կ'ըսէ, «Կային չար էր եւ իր եղբայրը սպաննեց» (Ա. Յովհ. Գ. 12):

Բայց աւելի ցաւալին այն է որ չարը հակամէտ է մեռցնելու արդարը, քանի որ անոր բարի գործերը եւ անոր արդարութիւնը զինք անհանգիստ կ'ընեն: Դատապարտութենէն ազատելու համար, չարագործը կը խորհի թէ լաւագոյն ձեւը արդար դատաւորը մեռցնել եւ անկէ ազատիլ է: Լաւագոյն ձեւը իր ոճիւրը գոցելու եւ ինքզինք արդարացնելու համար, թուրքը յարմար տեսաւ մեռցնել հայր որպէսզի անոր բարի գործերը եւ արդարութիւնը իր դէմ չվկայեն եւ զինք անհանգիստ չընեն: Դժբախտաբար այս է այս աշխարհի մէկ անխախտ կանոնը: Մեղաւորը կը մեռցնէ արդարը: Իրաւունքը զօրաւորին է: Մեծ ձուկերը կը կլլեն փոքր ձուկերը:

Երրորդ, մեր նահատակները կը բողոքեն արդարութեան համար: Ոճրագործները լուռ կը մնան ընդհանրապէս եւ կը փորձեն լռեցնել արդարները զանոնք մեռցնելով, եւ կը խորհին թէ անոնց ձայնը այլեւս բնաւ պիտի չլսուի: Սակայն արդարներուն արիւնը կը բողոքէ երբ եւ ուր որ ալ թափուած ըլլայ որպէսզի եւ մինչեւ որ արդարութիւն ըլլայ: «Եւ Տէրը կայնին ըսաւ՝ Ի՞նչ ըրիր, քու եղբորդ արիւնին ձայնը գետնէն ինծի կը բողոքէ» (Ծննդ. Գ. 10): Ինչպէս Աբէլին, նոյնպէս ալ մեր 1.5 միլիոն նահատակներուն արիւնը Տէր Զօրի անապատներուն ընդերքներէն կը բողոքէ, կը գոռայ, չէ՞ք լսեր: Ինչպէ՞ս կարելի է չլսել: Ով որ

խիղճ ունի, ականջ ունի, ով որ մարդկային զգացում եւ քրիստոնէական հասկացողութիւն ունի եւ կը սիրէ որ արդարութիւն ըլլայ, չի կրնար չլսել այս արդար բողոքը: Չմոռնանք որ յետաձգուած արդարութիւնը ուրացուած արդարութիւն է: Եւ այնքան ատեն որ երկրի վրայ չի լսուի անմեղ նահատակներուն բողոքի ձայնը արդարութեան համար, անոնք պիտի շարունակեն բողոքել նոյնիսկ երկինքի մէջ: Մտիկ ըրէք այս ձայնը, որ ոչ թէ Տէր Զօրէն կամ Հայաստանէն կու գայ, այլ երկինքէն. «Ով սուրբ ու ճշմարիտ Տէր, մինչեւ ե՞րբ չես դատեր ու մեր արիւնին վրէժը երկրի բնակիչներէն պահանջեր» (Յայտն. 2. 10): Ասիկա ոչ միայն բողոք, այլ նաեւ վրէժի կոչ մըն է նահատակներուն կողմէ՝ ուղղուած Աստուծոյ - երկինքի մէջ - որպէսզի արդարութիւն ըլլայ երկրի վրայ: Որպէսզի Աստուծոյ Անունը սուրբ ըլլայ, իր թագաւորութիւնը գայ եւ իր կամքը ըլլայ, ինչպէս երկինքի մէջ՝ նոյնպէս երկրի վրայ (Մատթ. 2. 9,10): Աստուծոյ թագաւորութիւնը երեւակացութիւն չէ, այլ իրականութիւն: Միայն երկինքի մէջ չէ, այլ նաեւ երկրի վրայ է: Անիկա անտարբերութիւն, մոռացութիւն, ցաւ եւ ատելութիւն չէ, այլ յանձնառութիւն, սէր, խնդրութիւն եւ արդարութիւն է: Աստուծոյ խօսքը կ'ըսէ. «Վասնզի Աստուծոյ արքայութիւնը կերակուր եւ խմիչք չէ, հապա արդարութիւն, խաղաղութիւն եւ խնդրութիւն՝ Սուրբ Հոգիով» (Հռոմ. 14. 17):

Արդարութիւնը լաւ ճամբան է: Մէրը՝ աւելի լաւ ճամբան: Բայց Յիսուս լաւագոյն ճամբան է:
- Աբէլ թէեւ մեռաւ, բայց կը խօսի:
- Մեր 1.5 միլիոն նահատակները թէեւ մեռան, բայց կը խօսին:
- Արդեօք լսող կա՞նք...




Photograph - Jacob Demirdjian
Running WOLF Photography
POWER OF THE CAMERA
YOUR ONE STOP INTERNATIONAL ART DEALER
TEL: (626) 795-4400 FAX: (626) 526-6404

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՆԵՐԱԼԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՆԿՐԵՏԻ ՄԵՐՈՒՄՆԵՐԸ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION



Քրիստոսը Այնպես, Լուսապոյն Անպոստ
Քրիստոսը Այնպես, Լուսապոյն Անպոստ



Մ.Ք.Ս. Արարձանի Կարգադրման Կարգադրման
Տնօրենությունը կը բարձրագույն կարգադրման
Կարգադրման, արժեքաւոր Կարգադրման Կարգադրման
Կարգադրման Արարձանի կարգադրման կարգադրման

ԵՐԵՎԱՆ ԵԱՐԻԻՐԱՍԵԱԿԻ ԿԱԼԱ- ՃԱՇԿԵՐՈՅԹ ԵՄԻՍԿՐՈՒԹԵԱՄԲ ՈՒՉՉԵՐՏ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԲԱՆԱԿՈՍ ՊԵՐՑ ՍԵՂՐԱԿԵԱՆ

ԿԱՐԳԱԿՐՈՒՄԻ ՄԵՐՈՒՄՆԵՐԸ

ԿԱՐԳԱԿՐՈՒՄԻ ՄԵՐՈՒՄՆԵՐԸ

ԿԱՐԳԱԿՐՈՒՄԻ ՄԵՐՈՒՄՆԵՐԸ

ԿԱՐԳԱԿՐՈՒՄԻ ՄԵՐՈՒՄՆԵՐԸ

ԿԱՐԳԱԿՐՈՒՄԻ ՄԵՐՈՒՄՆԵՐԸ

ԿԱՐԳԱԿՐՈՒՄԻ ՄԵՐՈՒՄՆԵՐԸ

ՅՈՒՆԻՍ 17, 2006

Արարձանի Կարգադրման Կարգադրման

Կարգադրման կարգադրման կարգադրման ԿԱՐԳԱԿՐՈՒՄԻ ՄԵՐՈՒՄՆԵՐԸ

ԿԱՐԳԱԿՐՈՒՄԻ ՄԵՐՈՒՄՆԵՐԸ կապի կետ: www.agbu.am

ԿԱՐԳԱԿՐՈՒՄԻ ՄԵՐՈՒՄՆԵՐԸ